

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՆԺԴԵՀ ԵՐԱՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ**

HAMLET PETROSYAN
NZHDEH YERANYAN

**THE MONUMENTAL CULTURE
OF ARTSAKH**

ГАМЛЕТ ПЕТРОСЯН
НЖДЕ ЕРАНЯН

**МОНУМЕНТАЛЬНАЯ
КУЛЬТУРА АРЦАХА**



HAMLET PETROSYAN, NZHDEH YERANYAN

**THE MONUMENTAL CULTURE
OF ARTSAKH**

ГАМЛЕТ ПЕТРОСЯН, НЖДЕ ЕРАНЯН

**МОНУМЕНТАЛЬНАЯ
КУЛЬТУРА АРЦАХА**

YEREVAN - 2022 - ЕРЕВАН

ՀԱՍԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՆԺԴԵՀ ԵՐԱՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ**

ԵՐԵՎԱՆ
2022

Գիրքը լույս է տեսնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ

*The book is published with the recommendation of the Scientific Council
of the Institute of Archeology and Ethnography of NAS RA*

*Книга издается по рекомендации Ученого совета
Института археологии и этнографии НАН РА*

ՀՏԴ 93/94:72:008
ԳՄԴ 63+85.11+71
Պ 505

Պետրոսյան Համլետ, Երանյան Նժդեհ
Պ 505 **Արցախի կոթողային մշակույթը** / Հ. Պետրոսյան, Ն. Երանյան. – Եր: 2022 – 232
էջ, 60 գրչանկար, 3 քարտեզ, 300 լուսանկար:

Գրքում պատմա-աղբյուրագիտական, ճարտարապետական, պատկերագրական և
ինաստարանական քննությամբ ներկայացվում է Արցախի կոթողային մշակույթը՝
ներառելով հին, անտիկ, վաղքրիստոնեական կոթողները, խաչքարերն ու տապա-
նաքարերը: Մանրամասնվում և պատճառաբանվում են այդ կոթողների էթնոլա-
վանական պատկանելության խնդիրները: Ներկայացվում և փաստագրական
տվյալների քննությամբ հերքվում են Արցախի կոթողային մշակույթի վերաբերյալ
աղբյուրագիտական զեղծարարությունները:

The book presents the monumental culture of Artsakh, including old, antique, early Chris-
tian monuments, khachkars and tombstones, by historical source study, architectural,
pictorial and semantic examination. The problems of ethno-religious affiliation of these
monuments are explained and reasoned in detail. The Azerbaijani falsifications on the
monumental culture of Artsakh are presented and denied by the examination of document-
ary evidence.

В книге историко-археологическим, архитектурным, иконографическим и семантическим
исследованием представляется монументальная культура Арцаха, включая древние,
античные, раннехристианские памятники, хачкары и надгробные камни. Детально
экзаменуются и аргументируются проблемы этноконфессиональной принадлежно-
сти этих памятников. Представляются и фактическими данными опровергаются азербай-
джанские фальсификации монументальной культуры Арцаха.

ՀՏԴ 93/94:72:008
ԳՄԴ 63+85.11+71

ISBN 978-9939-0-3948-0

© Պետրոսյան Համլետ, 2022
© Երանյան Նժդեհ, 2022

Երախտագիտության խոսք

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը՝
գրքի արեղծումն ու փպագրությունը հովանավորելու համար:

Գրքի լուսանկարների հիմնական մասը կատարել է Համլետ Պետրոսյանը,
մնացած դեպքերում նշված են հեղինակները:

Գրչանկարները պատրաստել են Լիլիթ Մինասյանը, Լյուբա Կիրակոսյանը,
Սասուն Դանիելյանը, քարտեզները՝ Հենրիկ Դանիելյանը:

Անգլերեն թարգմանությունը՝ Արդա Չարխչյանի,
ռուսերեն թարգմանությունը՝ Դիանա Զարդարյանի:

A word of gratitude

*The authors express their gratitude to the
Armenian General Benevolent Union
for sponsoring the creation and publication of the book.*

Most of the photos in the book were taken by Hamlet Petrosyan,
in other cases the authors are mentioned.

The drawings were made by Lilit Minasyan, Lyuba Kirakosyan, Sasun Danielyan,
the maps by Henrik Danielyan.

English translation by Aida Charkhchyan, Russian translation by Diana Zardaryan.

Слово благодарности

*Авторы выражают благодарность
Армянскому Всеобщему Благотворительному Союзу
за спонсорскую помощь в создании и издании книги.*

Большинство фотографий в книге сделаны Гамлетом Петросяном,
в остальных случаях указаны авторы.

Эскизы выполнили Лилит Минасян, Люба Киракосян, Сасун Даниелян,
карты – Генрик Даниелян.

Английский перевод Аиды Чархчян, русский перевод Дианы Зардарян.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CONTENTS

СОДЕРЖАНИЕ

ԱՐՑԱԽԻ ԿՈԹՈՂԱՅԻՆ

ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գլուխ առաջին Նախաքրիստոնեական կոթողները, Նժդեհ Երանյան	9
Ա. Մենհիրները	9
Բ. Մարդակերպ սալերը	9
Գ. Մարդակերպ կոթողները	10
Գլուխ երկրորդ Անտիկ կոթողային մշակույթը, Համլետ Պետրոսյան	16
Գլուխ երրորդ Վաղքրիստոնեական խաչակիր կոթողները, խաչերն ու խաչային հորինվածքները, Համլետ Պետրոսյան	17
Ա. Խաչակիր կոթողները և ծավալային խաչերը	17
Բ. Քանդակային խաչերը և խաչային հորինվածքները	21
Գլուխ չորրորդ Խաչքարային մշակույթը, Համլետ Պետրոսյան	23
Ներածություն	23
Ա. Վաղ խաչքարերը. 9-11-րդ դարեր	26
Բ. 12-14-րդ դարերի խաչքարերը	30
Գ. 15-18-րդ դարերի խաչքարերը	35
Դ. Խաչքարային պատկերաքանդակը	36
Ե. Խաչքարային արձանագրությունը	43
Գլուխ հինգերորդ Տապանաքարային մշակույթը, Համլետ Պետրոսյան	49
Գրականություն	135
Քարտեզներ և նկարներ	137

THE MONUMENTAL CULTURE OF ARTSAKH


Chapter One The Pre-Christian Monuments of Artsakh, Nzhdeh Yeranyan	53
A. The Menhirs	53
B. Anthropomorphic Slabs	53
C. Anthropomorphic Stelae	54
Chapter Two Antique Monumental Culture, Hamlet Petrosyan	59

Chapter Three	
Early Christian Monuments, Crosses and Cross Compositions , <i>Hamlet Petrosyan</i>	60
A. Cross-bearing Monuments and Winged Crosses	60
B. Carved Crosses and Cross Compositions	63
Chapter Four	
Khachkar Culture , <i>Hamlet Petrosyan</i>	66
Introduction	66
A. Early Khachkars (9 th -11 th Centuries)	69
B. The Khachkars of the 12 th -14 th Centuries	73
C. Khachkars of the 15 th -18 th Centuries	77
D. Figure Reliefs of Khachkars	78
E. The Inscription on the Khachkar	84
Chapter Five	
Tombstone Culture , <i>Hamlet Petrosyan</i>	89
Bibliography	135
Maps and Figures	137

МОНУМЕНТАЛЬНАЯ КУЛЬТУРА АРЦАХА

Глава первая	
Дохристианские изваяния , <i>Нжде Еранян</i>	93
A. Менгиры	93
B. Антропоморфные плиты	93
B. Антропоморфные изваяния	94
Глава вторая	
Античная монументальная культура , <i>Гамлет Петросян</i>	100
Глава третья	
Раннесредневековые стелы с объемными крестами, кресты и крестные композиции , <i>Гамлет Петросян</i>	101
A. Стелы с крестами и объемные кресты	101
B. Резные кресты и крестные композиции	105
Глава четвертая	
Культура хачкаров , <i>Гамлет Петросян</i>	107
Введение	107
A. Ранние хачкары (9-11-ые века)	110
B. Хачкары 12-14-х веков	114
B. Хачкары 15-18-х веков	118
Г. Фигуративные рельефы хачкаров	120
Д. Надписи на хачкарах	127
Глава пятая	
Культура надгробий , <i>Гамлет Петросян</i>	132
Литература	135
Карты и рисунки	137

Արցախի կոթողային մշակույթն այդ գունագեղ երկրամասի պատմության, ճարտարապետության, արվեստի ամենավաղ դրսևորումն է: Հագարավոր հին կոթողները, ճարտարապետական մանրամասները, նրանց պատկերաքանդակներն ու արձանագրությունները դարեր շարունակ ուղեկցել են լեռնաշխարհի ազատատենչ ժողովրդին, ձևավորել նրա սրբազան շրջապատը, հավատն ու ճաշակը: Սա առաջին գիտական փորձն է մի ընդհանուր պատկերացում տալու այդ ինքնատիպ, հարուստ ու բազմազան մշակույթի մասին: Հուսով ենք, որ այն խթան կհանդիսանա մեր ընդհանուր ժառանգության հանդեպ էլ ավելի հոգածու վերաբերմունքի, նրա ավելի մանրամասն ու համապարփակ հետազոտությանը, նրա պահպանությանն ու պաշտպանությանը:





Գլուխ առաջին

Նախաքրիստոնեական կոթողները

(նկ. 1 - 26, գծ. 1 - 12)

Մերձավոր Արևելքում և Եվրասիական տափաստաններում տարատեսակ քարե կոթողները երևան են գալիս հատկապես մ. թ. ա. 4–3-րդ հազարամյակներից սկսած: Վերջիններս հանդիպում են Հյուսիսարևմտյան Իրանում, Միջին Ասիայում, Սիրիայում, Եվրոպայում, Հյուսիսային Մերձսևծովում, Հյուսիսային Կովկասում, Փոքր Ասիայում և այլուր: Այդ շարքում առանձնանում են քարե մարդակերպ կոթողները, որոնք առավել ակտիվ սկսում են տարածվել մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբում, որն, ըստ երևույթին, կապված է տարբեր ցեղերի տեղաշարժերի հետ (Ingraham, Summers 1979, 67–87):

Հայկական լեռնաշխարհում կոթողային մշակույթը ներկայացված է դեռևս վաղ և միջին բրոնզեդարյան հուշարձաններով: Այդպիսիք են, օրինակ, մենհիրները, վիշապաքարերը, ֆալլոսները և տարատեսակ այլ պաշտամունքային կոթողները (Есаян 1980):

Ա. Մենհիրները


Մ. թ. ա. 2–1-ին հազարամյակի առկա նյութերով Հայաստանն առանձնանում է որոշակի բազմազանությամբ և կարելի է ենթադրել, որ այդ բազմազանության մի դրսևորումն էլ արցախյան կոթողներն են: Մ. թ. ա. 2-րդ հազարամյակից սկսած Ար-

ցախում հանդիպում են մեծ դամբարանների վրա ուղղաձիգ կանգնեցված քարակոթողները՝ մենհիրները: Դրանք վավերացվել են դեռ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի պեղումներով: Մենհիրները, սակայն, որպես կանոն անմշակ են և որևէ պատկերագրություն չեն կրում: Այս կոպտատաշ քարերն ուղղաձիգ դիրքով առանձին կամ խմբով կանգնեցնում էին դամբարանների վրա: Արցախի Իվանյան (Խոջալու) բնակավայրի տարածքում գտնվող դամբարաններն ամենահայտնին են մենհիրների առկայությամբ: Կ. Քուշնարյովան նշում է, որ գուցե դամբարանադաշտի որոշ հատվածներում կուտակված տարբեր չափերի երկայնական կրաքարի բեկորները ևս ծառայել են որպես մենհիր կամ դրա պատրաստման հումք: Հարկ է նշել, որ տարածքի առանձին տեղերում ևս կան ուղղաձիգ կանգնեցված քարեր, որոնք մենհիր են հիշեցնում (Кущнарева 1959, 380–387):


Բ. Մարդակերպ սալերը

Արցախի տարածքի վաղ շրջանի կոթողների շարքում վավերացվել է նաև այսպես կոչված մարդակերպ սալերի առկայությունը (նկ. 1, 2): Վերջիններս մինչև մեկ մետր բարձրության և մոտավորապես 40 սմ լայնության քարեր են, որոնք ունեն եռանկյունաձև վերջավորություն: Այս կոթողները մանրամասն մշակման չեն ենթարկվել:


Գծ.1. Մարդակերպ սալ, մ.թ.ա. 9–8-րդ դարեր, Այգեստան գյուղի շրջակայք
 Գծ.2. Մարդակերպ սալ, մ.թ.ա. 9–8-րդ դարեր, Այգեստան գյուղի շրջակայք
 Գծ.3. Մարդակերպ սալ, մ.թ.ա. 9–8-րդ դարեր, Այգեստան գյուղի շրջակայք



Գծ.1.



Գծ.2.



Գծ.3.

պարզապես հղկվել են, իսկ եզակի դեպքերում, ակոսային քանդակման տեխնիկայով առանձնացվել է վերին հատվածը՝ ենթադրաբար գլուխ պատկերելու համար (գծ.1–3): Այսպիսով, կարծես սալերին մարդատեսքություն է հաղորդվել: Այս տիպի կոթողներն Արցախում շատ տարածված չեն եղել, բայց հետաքրքիր է այդ խմբի ներկայությունը ևս: Նույն շարքի մի քանի կոթող հայտնաբերվել է 2000-ական թվականներին Հ. Պետրոսյանի և Վ. Սաֆարյանի կողմից՝ Ստեփանակերտից մոտ 4 կմ հյուսիս՝ Այգեստան գյուղի մոտակայքում, պեղումների ժամանակ: Կոթողների քանակը հասնում է մոտ մեկ տասնյակի:

Նմանատիպ կոթողները, որոնք այլ հուշարձաններում հանդիպում են դամբարանների վրա, համարվում են մարդակերպ կոթողների վաղագույն օրինակն ու նախատիպը, թվագրվում են մ.թ.ա. 9–7-րդ դարերով:

Մ.թ.ա. 9–7-րդ դարերով թվագրությունը, կարծես, ամենահավանականն է նաև արցախյան մարդակերպ սալերի համար:

9. Մարդակերպ կոթողները

Արցախի կոթողային մշակույթն առավել ցայտուն է արտահայտվում մ.թ.ա. 1-ին հազարամյակից սկսած՝ ներկայանալով քարե մարդակերպ կոթողների շարքով (նկ.3–17, 21–26): Արցախի քարե մարդակերպ կոթողները երկրամասի նախաքրիստոնեական մշակույթի կարևոր բաղկացուցիչներից են:

Չնայած առաջին հնագիտական հետազոտություններն Արցախում սկսվել են 19-րդ դարի 80-ական թվականներից, առաջին կոթողներն Արցախում վավերացվել են 20-րդ դարի 60-ական թվականներին: Դրանց նվիրված առաջին աշխատություններում

բացակայում է որևէ քննություն և ավելի շատ ներկայացված են հայտնաբերման տեղագրությունն ու միջավայրը: Այդ մասին որոշ տեղեկություններ կան աղբբեջանցի հետազոտողների՝ Մ.Խալիլովի, Ռ.Վահիդովի, Ռ.Գեուշևի և ուրիշների աշխատություններում (Халилов 1984, 438–439.): Սակայն դրանց տեխնիկական, պատկերագրական, իմաստաբանական քննությունը, ժամանակագրությունը և հնարավոր մշակութային պատկանելության խնդիրները մնում էին չլուծված:


Արցախի ազատագրական պատերազմի արդյունքում նոր հնարավորություններ էին ստեղծվել նաև տարածաշրջանի հնագույն պատմության և մշակույթի հետազոտության համար: Մարդակերպ կոթողների ֆիզիկական մատչելիությունը դարձավ այն էական հանգամանքը, որ հնարավորություն ստեղծեց իրականացնել դրանց մանրամասն նկարագրությունը, չափագրումը, լուսանկարումը, ինչպես նաև պատմամշակութային միջավայրի հետազոտությունը:

Այս տարածքները խորհրդային տարիներին, հայտնի պատճառներով, բավարար չափով չեն ուսումնասիրվել: Եղած հետազոտություններն էլ ակնհայտորեն քաղաքականացված են: Սա վերաբերում է նաև մարդակերպ կոթողներին, որոնք աղբբեջանական որոշ հետազոտողներ ներկայացրել են որպես աղվանական՝ փորձելով դրանց տարածվածությունը, հատկապես Արցախում, դիտել որպես աղվանական էթնոմշակութային սուբստրատի առկայություն: Ուստի, այդ հուշարձանների հետազոտությունը, դրանց հստակ ժամանակագրության և էթնոմշակութային պատկանելության խնդիրների քննությունը ոչ միայն գիտական հետաքրքրություն է ներկայացնում, այլև հնարավորություն է տալիս մեր-

Գծ. 4. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Գյավուրկալա (Սյրեփանակերպ)

Գծ. 5. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Բահիշուն թափա (Մարտակերպի պարմաներկրագիրական թանգարան)

Գծ. 6. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Բահիշուն թափա (Մարտակերպի պարմաներկրագիրական թանգարան)



Գծ. 4.

Ժել ադրբեջանական զեղծարարությունները: 44-օրյա պատերազմի արդյունքում՝ կոթողների մեծ մասը մնացել է Ադրբեջանի բանակի վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Անհայտ է ոչ միայն դրանց ներկա վիճակն, այլ նաև հետազոտման հեռանկարները:

Առկա տվյալներով՝ ներկայումս կարելի է խոսել ավելի քան երեսուն կոթողի մասին, որոնք հիմնականում տեղակայված են դաշտային կամ տափաստանային Արցախի մի բավականին պարփակ շրջանում, իսկ մի քանիսն էլ, դեռևս խորհրդային տարիներին, տեղափոխվել են Արցախի պետական-պատմաերկրագիտական (Ստեփանակերտ) և Մարտակերտի պատմաերկրագիտական թանգարանների բակեր:


Պատկերագրությունը: Արցախի մարդակերպ կոթողները կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական լայն ակոս-գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ «առանձնացնելով» մարմնի երեք մասերը՝ գլուխը, որը զբաղեցնում է

ամբողջ կոթողի մեկ երրորդից մի փոքր քիչ ծավալ, իրանը և գոտկատեղից ներքևի հատվածը: Այս հատվածը սովորաբար պատկերագրություն չէր ունենում: Այն պարզապես թեթև հղկվում էր և նախատեսված էր հողի կամ հատուկ հիմքի մեջ դնելու համար (գծ. 4–12):


Կոթողներն ունեն մոտավորապես 30–60 սմ լայնություն, 120–140 սմ, երբեմն մինչև 2–2,5 մետր բարձրություն և 20–40 սմ հաստություն:

Կոթողների նկարագրական քննությունը թույլ է տալիս վավերացնել, որ պատկերագրությունն առնվազն երկու համալիրով է ներկայանում՝ ա. մարմնակազմություն, բ. հանդերձանք (ներառյալ սպառազինություն ու հարդարանք): Մարմնակազմական առումով կարելի է առանձնացնել մանրամասներ, որոնք բնորոշ են բոլոր կոթողներին, և մանրամասներ, որոնք առկա են մի մասի վրա:

Մարմնակազմական առումով նկատելի են ձեռքերը, քիթը և որպես կանոն՝ աչքերը:



Գծ. 5.



Գծ. 6.

- Գծ. 7. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Նոր Կարմիրավան
 Գծ. 8. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Նոր Կարմիրավան
 Գծ. 9. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Նոր Կարմիրավան


Հետաքրքիր է, որ կոթողների վրա բացակայում են բերանը, ականջները և մորուքը: Պատկերված հանդերձանքի կամ այլ հարդարանքի շարքում դիտարկելի է գլխանոցը, դաշույնը և ապարանջանը (գծ. 5, 6, 9, 11):

Մագերի, ականջների, բերանի, երբեմն էլ աչքերի բացակայությունը, մեջքին՝ գուռկանասում, թեքությամբ պատկերված դաշույններն ավելի քան հավանական են դարձնում հագուստի և հանդերձանքի այլ համալիրների առկայությունը, որոնք ուղղակի կարևոր չեն դիտվել և չեն պատկերվել: Մա մի կարևոր կովան է, ենթադրելու, որ մենք գործ ունենք նշանային պատկերագրության հետ. պատկերվել է ոչ թե իրական արտաքինն, այլ նրա նշանակիչ-իմաստակիր բաղկացուցիչները: Կարող ենք եզրակացնել, որ կոթողներին պատկերվել են տղամարդիկ, հիմնականում պաշտպանական հանդերձանքով: Քանդակվողի դիրքի մասին ոչինչ հստակ ասել հնարավոր չէ: Սակայն, դատելով մարմնակազմությունից, կարելի է ենթադրել, որ նրանք կամ պատկած են, կամ կանգնած, բայց ոչ երբեք՝ նստած:


Հայտնի բոլոր կոթողները պատրաստված են կրաքարից, որի ընդարձակ նստվածքները և հին մշակումների հետքերով հանքավայրերը, լայնորեն տարածված են Արցախի արևելյան նախալեռներում:

Ինչ վերաբերում է կոթողների քանդակման տեխնիկային, ապա կարելի է նշել, որ տափակ սալերին մարդակերպություն հաղորդելու համար գործածվել է քանդակման երեք հիմնական տեխնիկա՝ ա. հետնախորքի հեռացում, բ. ակոսային քանդակ, գ. գծաքանադակ: Ընդորում, առաջին երկու տեխնիկաները հիմնական հորինվածքաստեղծ բնույթ ունեն են, իսկ գծային քանդակը կիրառվել է միայն առանձին դետալների մշակման ժամանակ (Yeranyan 2021, 250):

Տեղադրությունը: Դիտարկվող կոթողները տարածված են եղել Արցախի լեռնաշխարհը և տափաստանը միմյանց ձուլող երկայնական տարածքում՝ ձգվելով մոտավորապես 30–40 կմ: Դրանք սփռված են հատկապես Արցախի Հանրապետության հյուսիս-արևելյան շրջաններում՝ Մարտակերտում և շրջակա տարածքում, Տիգրա-



Գծ. 7




Գծ. 8

նակերտի, ինչպես նաև վերջինից ոչ հեռու գտնվող Գյավուրկալա բնակատեղիի շրջակայքում և Նոր Կարմիրավան գյուղի դաշտերում: Այս միջավայրից մի քանի կոթող դեռևս խորհրդային տարիներին տեղափոխվել է Ստեփանակերտ և Մարտակերտ, իսկ մի մասը շարունակում է գտնվել բաց դաշտում:

Համադրելով Արցախի քարե մարդակերպ կոթողների հայտնաբերման տեղեկությունները, կարող ենք փաստել, որ կոթողները հայտնաբերվել են ծովի մակերևույթից մինչև 500 մետր բարձրության վրա: Այսինքն՝ կոթողների գտնվելու տարածքն ամբողջությամբ համապատասխանում է Արցախի մարզագետնա-տափաստանային գոտուն: Ուսումնասիրվող տարածքը զբաղեցնում է Փոքր Կովկասի հարավարևելյան հատվածն՝ ընդգրկելով Կուր-Արաքսյան դաշտավայրի արևմտյան մասը՝ Արցախի տափաստանի արևելյան հատվածը և նրանից արևելք ընկած Միլի տափաստանի ծայր արևմուտքը:

Հայտնաբերման բոլոր օջախները գտնվում են Խաչենագետի ներքնահովտում (այնտեղ, ուր գետը դուրս է գալիս տափաստան) կամ նրա շրջակայքում: Այս տարածքները շատ բարեբեր են ինչպես անասնապահության, այնպես էլ երկրագործության համար: Թվում է, թե մարզագետնա-տափաստանային այս գոտին, որտեղով և հոսում էր խոշոր գետերից մեկը, պետք է, որ գրավիչ լիներ նրանց համար, ովքեր կանգնած են այս մշակույթի ակունքներում (Երանյան 2015, 128–130):

Չի բացառվում, որ ավելի մեծ՝ ֆիզիկապես մեզ ոչ հասանելի տարածական արեալում՝ Արցախի տափաստանի արևելյան մասում և նրանից արևելք ընկած Միլի տափաս-



Գծ. 9

տանում, դրանք այսքանով չեն սահմանափակվել: Մակայն, առկա հակամարտության պայմաններում անհնար է դրանց վավերացումը ոչ միայն հայ-ադրբեջանական սահմանից այն կողմ, այլև սահմանամերձ շրջաններում:

Ժամանակագրությունը և գործառույթը: Կոթողների ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է նաև դրանց ժամանակագրության և գործառույթի խնդիրները հատակեցնելը:

Արցախի քարե մարդակերպ կոթողները գործառույթով և գաղափարաբանությամբ ներկայացնում են մի համակարգ, որն արտացոլում է տվյալ ժամանակաշրջանի պատկերացումները մահվան, նախնիների պաշտամունքի և առհասարակ աշխարհի կառուցվածքի մասին: Կոթողների գործառույթը և գաղափարաբանությունը հասկանալու համար շատ կարևոր է սահմանել դրանց ժամանակագրությունը: Սա հնարավորություն կտա հասկանալ ոչ միայն

- Գծ. 10. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Նոր Կարմիրավան
 Գծ. 11. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Նոր Կարմիրավան
 Գծ. 12. Մարդակերպ կոթող, մ. թ. ա. 8–6-րդ դարեր, Սեյտույան
 (Արցախի պեղական պարունակները կրագիտական թանգարան)

կոթողների առաջնային և բուն գործառույթն, այլ նաև այն կանգնեցողների հավատալիքների համակարգը և պատկերացումները տիեզերքի կառուցվածքի և երևույթների մասին:


Կոթողների թվագրությանն ու գործառույթին անդրադառնալիս՝ կարևոր է նշել, որ խնդիրը բարդանում է, երբ նկատի ենք ունենում, որ կոթողների մեծ մասը հայտնաբերվել է ոչ իր նախնական կանգնեցման վայրում (in situ): Ավելի քան 30 կոթողից միայն մի խումբն է հայտնաբերվել իր բնական միջավայրում: 2016 թվականին Մարտակերտի շրջանի Նոր Կարմիրավան գյուղում հայտնաբերված մարդակերպ կոթողների շրջակայքում իրականացված պեղումները ցույց տվեցին, որ դրանց մեծ մասը գտնվում է իր կանգնեցման միջավայրում՝ դամբարանի վրա: Դամբարանից հայտնաբերված հնագիտական նյութը թվագրվում է մ. թ. ա. 8–6-րդ դարերով, ինչը կոթողների թվագրության համար ևս ամենահավանական թվագրությունն է (նկ. 18–20):

Կոթողների նման թվագրության օգտին է խոսում նաև պատմահամեմատական քննու-

թյունը: Տարածաշրջանում հայտնի այլ նմանատիպ մարդակերպ կոթողների մասին տեղեկությունները համադրելով և քննության առնելով Արցախյան կոթողների ծավալային լուծումների, քանդակման տեխնիկայի և քանդակների ստրիբուտիկայի հետ, գալիս ենք եզրակացության, որ Արցախի մարդակերպ կոթողները պատրաստվել և կանգնեցվել են մ. թ. ա. 8–6-րդ դարերի միջակայքում (Yeranyan 2021, 251–253):

Քանդակի տեխնիկական համեստ զինանոցը, պատկերագրական սխեմատիզմն ու «ժլատությունը» հնարավորություն են տալիս հավաստել, որ ի դեմս արցախյան կոթողների, գործ ունենք մի ընդարձակ պատմամշակութային երևույթի նախնական դրսևորման հետ:


Ինչ վերաբերում է այս կոթողների գործառույթին, ապա քննության առնելով առկա տվյալները, կարող ենք եզրակացնել, որ Արցախից հայտնաբերված կոթողներն, ամենայն հավանականությամբ, գերեզմանաքարեր էին, և/կամ պաշտամունքային սիմվոլներ, որոնք պատվանդանի մեջ կամ



առանց պատվանդանի տեղակայվել են դամբանաբլուրի գագաթին կամ կենտրոնում, չի բացառվում՝ նաև հիմնահողային թաղումների վրա: Այս կոթողները կանգնեցվել են կոլեկտիվի անդամներից մեկի մահվան դեպքում: Հավանաբար, խոսքը սոցիալական բարձր խավին պատկանող անձի մասին է. գորապետ-ռազմական առաջնորդի և/կամ հերոս-ռազմիկի պատկերումն ամենահավանականն է Արցախի կոթողների համար: Այս կոթողները զուտ գերեզմանաքարեր լինելուց բացի, գուցե ունեցել են այլ գործառույթ ևս: Քանի որ կոթողներն այս կամ այն կերպ հարաբերվել են մշտական բնակավայր չունեցող և շարժուն կենսակերպ վարող ցեղերի հետ, հավանական է, որ դրանք ինչ որ առումով կարող էին կատարել «սահմանաքարի», բաց դաշտում տարածքի կողմնորոշման և որոշակի ցուցիչի դեր ևս:

Այս կոթողները կանգնեցնողներն ունեցել են նաև առասպելական հարուստ աշխարհընկալում՝ հիմնականում տիեզերքի եռամասնության, տիեզերական պյան կամ ծառի վերաբերյալ: Կոթողները կրում են աշխարհաստեղծման ընդհանրացված պատկերացումները՝ ներկայացնելով առասպելի կենտրոնական տարրը՝ ուղղահայաց առանցքը (աշխարհի առանցքը, համաշխարհային սյունը, ծառը, ֆալլոսը և այլն):

Արցախի տարածքից հայտնաբերված որոշ մարդակերպ կոթողներ հետագայում վերաօգտագործվել են՝ հիմնականում ծառայելով որպես շինանյութ կամ ուշ միջնադարյան գերեզմանաքարեր (նկ. 11):



Գծ. 12

Ակնհայտ է, որ մինչև մ. թ. ա. 1-ին հազարամյակի վերջն ընկած հատվածում Արցախյան կոթողները ներկայանում են տարատեսակ մենհիրների, մարդակերպ սալերի և մարդակերպ կոթողների տեսքով և լրացնում են Առաջավոր Ասիայի կոթողային մշակույթի շարքը:

Կարող ենք փաստել, որ սկսած առնվազն երկաթի դարից, Հայկական Լեռնաշխարհում ձևավորվել է մշակութային մի ուրույն ենթագոտի, որն ընդգրկել է պատմական Հայաստանի Արցախ և Ուտիք նահանգները, որի կերտողները մի կողմից առնչվում են Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի նստակյաց մշակույթների կրողների, մյուս կողմից՝ տարածաշրջան ներթափանցած շարժուն տնտեսաձև վարող ցեղերի հետ:




Գլուխ երկրորդ

Անտիկ կոթողային մշակույթը

(Նկ. 27 - 33, գծ. 13)

Արցախի անտիկ կոթողային մշակույթի մասին տեղեկությունները բավականին սուղ են: Տիգրանակերտի և շրջակայքի ընդարձակ հնագիտական հետազոտությունները, որոնք ներառել են նախ և առաջ ամրացված թաղամասի պարիսպները, բնակելի երկու թաղամասերի առանձին հատվածներ, ժայռափոր ջրանցքի թունելային հատվածն ու արևելյան դամբարանդաշտը, ցավոք քիչ տեղեկություններ են տալիս բուն կոթողային մշակույթի մասին:

տարածվել Փոքր Ասիայում, Հայաստանում և հարևան երկրներում (Իրան, Վրաստան, տես Petrosyan 2020, 334–335): Պարիսպները շարված են կրաքարե մեծ կվադրերով, որոշ կվադրերի քաշն անցնում է մեկ տոննայից (նկ. 28): Դրանք անխտիր ունեն շարվածքի սրբատաշ մակերես, ռուստիկ (բարձիկատեսք) արտաքին, եզրամասերի թեք կտրվածքներ, պատասխանատու հատվածներում իրար են միանում այսպես կոչվող «ծիծեռնակապոչ» կապերով (նկ. 29): Տեղական կաթնագույն կրաքարից կերտված այս պարիսպները, որ կառուցվել են մ.թ.ա առաջին դարի 80-ական թվականներին Հայոց արքա Տիգրան Մեծի կողմից (մանրամասն տես Petrosyan 2020, 328–329), ողջ քաղաքին տվել են սպիտակ տեսք: Նման կառուցողական տեխնիկան և քարի մշակման վարպետությունն, անշուշտ, պիտի իր դրսևորումն ունենար և կոթողային մշակույթում:



Գծ. 13. Արցախի Տիգրանակերտի, ամրացված թաղամասի հարակազիծը

Նկատենք, որ ամրացված թաղամասի հելլենիստական պաշտպանական համակարգը աչքի է ընկնում դասական նախագծմամբ. կլոր և ուղղանկյուն աշտարակները հաջորդում են իրար, պարսպահատվածներն անպայման զիգզագ են տալիս (գծ. 13, նկ. 27): Սա մի համակարգ է, որ մ.թ.ա. 3-րդ դարում մշակվել է Ալեքսանդրիայում, սպա

Տիգրանակերտի պեղումներից և շրջակայքում հայտնաբերված ուղղանկյուն հիմքի վրա բարձրացող բարձիկներով կրաքարե խարիսխները (նկ. 30, 31) վկայում են, որ դրանք կրել են փայտե կամ քարե սյուներ: Հատկապես կարելի նշել քաղաքի շրջակայքում պատահաբար հայտնաբերված կոթողի մանրամասները (նկ. 32, 33), որոնք առայժմ եզակի են Արցախի ողջ տարածքում:



Գլուխ երրորդ

Վաղքրիստոնեական խաչակիր կոթողները, խաչերն ու խաչային հորինվածքները

(նկ. 34 – 80, գծ. 14 – 22)

Վաղմիջնադարյան հայկական աղբյուրներում տեղ գտած տարաբնույթ պատմությունների քննությամբ՝ հնարավոր է դառնում որոշակի կոնկրետությամբ վերականգնել խաչելության և խաչի հետ կապված գաղափարների ու ծեսի տարածման-արմատավորման գործընթացը նաև Արցախում: 10-րդ դարում կազմված և Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գրքում, որն արտացոլում է Արցախի և Ուտիքի և նրա հայ բնակչության 4–10-րդ դարերի քաղաքական ու դավանամաշակութային կյանքը, տեղեկություններ են պահպանվել խաչի վաղ գաղափարաբանության, խաչակիր տարատիպ կոթողների ու նշանների կազմեցման ու կիրարկության, խաչերի և խաչային հորինվածքների վերաբերյալ: Օրինակ, Զաքարիայի և Պանդալիոնի նշխարների գյուտի հատվածից տեղեկանում ենք, որ *եկեղեցու մուրքի առջև բացօթյա խաչ էր կանգնեցված*, որ խաչն ընկալվում էր որպես *կենարար նշան, սուրբ խաչ, փերունեան խաչ*: Սրբերի նշխարները տեղափոխող թափորների, բաղկացուցիչ տարրերն էին *թափորային խաչերը և խաչվառները, ավերարանները, զանազան դրոշները, ծաղիկները և այլն* (Կաղանկատուացի 1983, 59–69):

Վաղքրիստոնեական արվեստում խաչի պատկերագրությունը ներկայանում է եր-


կու հիմնական տիպով. հավասարաթև (հունական) և ձգված համամասնություններով (լատինական) խաչերով: Եթե առաջինը կապվում էր խաչի հաղթական-լուսային կերպարի հետ և, որպես կանոն, առնվում էր շրջանի մեջ, ապա երկրորդն ավելի արտահայտում էր խաչի կենացծառային գաղափարաբանությունն ու պատկերագրությունը (Պետրոսյան 2008, 31–43): Խաչի այս երկու պատկերատիպերն էլ, զանազան հավելումներով հանդերձ, ընկած են վաղքրիստոնեական բացօթյա կամ թևավոր քարախաչերի, տարբեր նյութերից ու այլազան տեխնիկաներով պատրաստված խաչերի ու խաչաքանդակների հիմքում:

Պատկերագրական առումով, դրանք ավելի ներկայանում են շրջանի մեջ առնված և ձգված համամասնություններով խաչերով:

Ա. Խաչակիր կոթողները և ծավալային խաչերը

Ինչպես հայտնի է, ըստ հայերի դարձի լեգենդի՝ Հայաստանի քրիստոնեացման «ծրագիրը» Գրիգոր Լուսավորչին տրվում էր աստվածային տեսիլքի միջոցով: Առաջին քրիստոնեական կառույցը, որ երևում է Գրիգորին իր տեսիլքում, բացօթյա խաչակիր կոթողն է: Ըստ 5–6-րդ դարերի սահմաններում Արցախում ստեղծված Եղիշայի լեգենդի՝ սրբի վկայության տեղում, մահա-

Գծ. 14. Վաղորդարձանակալի
խաչակիր կոթողի կառուցվածքը



պարտների գրի վրա տարիներ անց Վաչագան արքան սյուն է կանգնեցնում. «կանգնեաց սին ի գրի նահատակութեան Եղիշայի: Եւ սենեկապանն արքայի մենակեաց եղեալ ի վերայ սեանն՝ կատարի» (Կաղանկատուացի 1983, 12), կամ մի այլ տեղեկության համաձայն, որը ներկայացնում է հայերի քարոզչությունը Հոների երկրում, խաչը կանգնեցվում է որպես նշան քրիստոնեության հաղթանակի (Կաղանկատուացի 1983, 255):

Խաչակիր կոթողները բաղկացած էին բազմաստիճան ստիլոբատից, որի վրա դրվում էր խարիսխ-պատվանդանը, սյուն, որը հենվում էր խարսխի վրա, խոյակ, որով պսակվում էր սյունը, խաչկալ, որ դրվում էր խոյակի վրա, և թևավոր կամ ծավալային խաչ, որն ագուցվում էր խաչակալի վրա արված հատուկ անցքի մեջ: Այս բոլոր մասերամասներն առկա են և Արցախում (գծ. 14):

Խարիսխները: Խարիսխների լավագույն օրինակները հայտնի են Բերդաշենից, ուր պահպանվել են նաև խոյակների, խաչակալների, սյուների մնացորդներ: Չորս խորանարդան խարիսխների արևմտահայաց երեսներին քանդակված են խաչային հորինվածքներ՝ խաչը շրջանի մեջ, եռաստիճան պատվանդանների վրա կանգնեցված ազատ թևերով ձողաբարձ խաչեր, որոնք ուղեկցվում են աստղերով, վառված մոմերով, բուսազարդերով (նկ. 34–38): Բերդաշենի խարիսխների արևմտահայաց կողերը եզրափակվում են հզոր եղջյուրներ կրող դիմահայաց խոյազուլիսներով: Երկրորդ խումբը կազմում են ուղղանկյուն ներքնասալից և գլանաձև բարձիկից բաղկացած երկմաս խարիսխները (նկ. 39): Ձևով դրանք սերտորեն կապվում են ուշ անտիկ խարիսխների հետ: Դրանցից մեկը ծագում է Բոնի Եղցի վանքից (նկ. 40, 41): Բարձիկն ավելի գլանաձև սյուն է հիշեցնում և հարդարված է ելնդավոր կիսագլանիկներով, որոնք փոխհատվելով՝ կազմում են մեկընդմեջ եռատերև կոկոն կամ էլ կենտրոնում ելնդավոր սերմ-գնդիկ ունեցող նշտարիկ (լանցետոկա): Արևմտյան ճակատում այս գոտին ներառում է շրջանի մեջ առնված ճառագայթաձև լայնացող թևեր ունեցող հավասարաթև մի խաչաքանդակ: Խորանարդան՝ դեպի վեր լայնացող ծավալով ու շեղանկյունազարդ կամ երկգիգզագ քիվով մի խարիսխ էլ ծագում է Ճանկաթաղից (նկ. 42, 43): Շեղանկյունազարդ գոտին կիրառվել է նաև Ամարասի Գրիգորիսի մատուռում, Տիգրանակերտում (նկ. 51), Վանքասարի եկեղեցում, Գյավուրկալայի խաչակալի վրա (նկ. 54) և այլուր: Տեղում պահպանվել է նաև կառույցի քանդակազարդ ճակտոնով երկթեք ծածկասալը (նկ. 44), ինչը հիմք է տալիս ենթադրել, որ կոթողը ներառված է եղել ավելի ընդգրկուն ծավալի մեջ:

Գծ. 15. Մյան խոյակ,
5 – 7-րդ դարեր, Բերդաշեն



Մյուները: Մյուների օրինակներ հայտնի են Բերդաշենից, Տիգրանակերտից, Գյավուրկալայից: Վերջինս (նկ. 45) հատվածքում մոտավոր վեցակող է, կողեզրերը հարդարվում են ուղղաձիգ առվակոսներով, առկա բարձրությունը մոտ 2,6 մետր է:

Խոյակները: Հայտնի են Բերդաշենից, ճարտարից, Տիգրանակերտից: Խորանարդատեսք մի խոյակ հայտնի է Ճարտարի վաղքրիստոնեական բնակատեղիից (նկ. 46): Ներքնամասում այն ութակող է, որը նշանակում է, թե դրվել է ութակող սյան վրա: Վերնամասում դառնում է քառակող և պսակվում նշտարիկներով հարդարված եզրագոտիով: Նույն լուծումն ունի և Տիգրանակերտի մատույցներից ծագող խոյակը: Միայն թե վերին եզրագոտին, նշտարիկների փոխարեն, հարդարված է զիգզագով, իսկ քանդակն էլ զարդարում է միայն արևմտյան կողը: Այն տվյալ դեպքում շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ է (նկ. 47): Այս խմբին է պատկանում և Տիգրանակերտի 5 – 6-րդ դարերի մեծ եկեղեցու 2007 թվականի պեղումների ժամանակ գտնված խոյակի բեկորը: Այն հարդարված է ելնդավոր շուշանաքանդակներով, իսկ քիվը՝ ելնդավոր պայտաձև (համարյա շրջան կազմող) զարդերի շարքով (նկ. 48): Իր քանդակներով այն համարյա նույնական է Ծղուկի Թանահատի վանքի 5-րդ դարի վերջի եկեղեցու խարխախներին և Վերիշենի խոյակներին: Տիգրանակերտին կից Վանքասարի եկեղեցու վարպետի նշանների մի զգալի մասն էլ նույնական է Միսավանի եկեղեցու նշաններին: Ինչպես կտեսնենք ստորև, Տիգրանակերտին կից քարայրային-եկեղեցական համալիրի խաչային հորինվածքների մի մասն էլ ամենամոտ զուգահեռները գտնում է Ծիծեռնավանքում: Ուստի, կարելի է հավանական համարել վաղմիջնադարում Մյունիք-Արցախում միանական ճարտարապետա-

կան-քանդակագործական դպրոցի գոյությունը:

Խոյակների երկրորդ խումբը ներկայանում է Բերդաշենի գնդաձև երկու օրինակով (գծ. 15, նկ. 49, 50): Քառանկյուն վերնասալը մի դեպքում կրում է պայտաձև զարդեր, երկրորդ դեպքում՝ ունի եռանկյունաձև սուխարիկներ: Խոյակների գնդաձև մասերը զարդարված են ոչ խորը ալիքաձև գծերով. այն տպավորությունն է, թե դրանք ասպագա քանդակային հորինվածքի ուրվագծերն են, մանավանդ, որ մի դեպքում այդ ուրվագծերի ետնախորքի վրա քանդակված բավականին տպավորիչ ելնդավոր մի խաչապատկեր՝ դեպի խաչահատումն ուղղված չորս բլթակ-տերևներով:

Առանձնակի է կանգնած Տիգրանակերտի պեղումների գտածոն, որը համադրում է սյան վերնամասն ու խոյակը մեկ միասնական ծավալում (նկ. 51): Հատկապես ուշագրավ են եղջյուրակերպ ելուստները, որոնցից, ամենայն հավանականությամբ, դամպարներ են կախվել:

Խաչակալները: Խաչակալը տեխնիկական առումով բացօթյա խաչակիր կոթողի ամենապատասխանատու բաղկացուցիչն էր, քանի որ հենց նրա վրա էր ամրացվում թևավոր խաչը: Ծավալային-քանդակային առումով՝ այն, որպես կանոն, արտապատկերում էր քառասյուն գմբեթակիր մի կառույց, սման Գրիգոր Լուսավորչի տեսիլքում

նկարագրվածին, որն իր հերթին խորհրդանշում է Գողգոթայում Տիրոջ գերեզմանի վրա կանգնեցված տաճարը կամ տեմպլետոն: Բերդաշենի օրինակներից մեկը (նկ. 52) ներկայացնում է երկհարկ շինության մոդել, որի «երկրորդ հարկաբաժինը» պատկերում է հաստահեղույս բազմատրամատ սյուներով ու ընդգծված պայտաձև կամարներով կենտրոնագմբեթ գետնամած մի կառույց՝ շատ նման Բերդաշենից ոչ հեռու գտնվող Ամարասի Գրիգորիսի մատուռի նախամուտքի կամարախորշին (նկ. 53): Երկրորդ խաչակալը (նկ. 54, 55) ծագում է Գյավուրկալայից, որը նորից քառասյուն գմբեթավոր կառույցի մոդել է, բայց բրգաձև «ծածկով»: Կողերը բուրգի հիմքին կից հարդարված են ատամնաշարով, ելնդավոր կիսագլանիկներից կազմվող գուգահեռ ուղիղների, թեք գծերի և զիգագսների համադրումով ձևավորված տարբեր երկրաչափական գծապատկերներով՝ համարյա նույնական Գրիգորիսի դամբարանի, Ճանկաթաղի խոյակի, Ծիծեռնավանքի քանդակագարդ գոտիներին: Առավել ուշագրավ է, որ բուրգի արևմտահայաց եռանկյունաձև կողի վրա եղել է զիգագագարդ երիզով շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչ, որը սակայն քերվել-հեռացվել է, և այժմ տեսանելի են միայն զիգագագագարդ շրջանի հատվածները և նրան ներքևից հարող երկու եռանկյունագարդերը: Վաճառի խաչակալը (նկ. 56) ներկայացնում է բազմատրամատ խարիսխների և սյուների և դրանք միացնող պայտաձև կամարների վրա հենվող մի գմբեթ, որի լանջերին քանդակված են խաղողի ողկույզներ: Ի տարբերություն այս գետնամած մոդելների՝ Տիգրանակերտի և Բերդաշենի որոշ օրինակներ առանձնանում են սլացիկ և նուրբ համամասնություններով և հարդարված են երկրաչափական զարդերով (նկ. 57, 58):

Թևավոր խաչերը: Թևավոր խաչերը, որպես կանոն, պսակել են կոթողները, դրանց մասեր են հայտնաբերվել Գյավուրկալայի, Տիգրանակերտի և Վաճառի պեղումների ժամանակ (նկ. 59, 60): Դրանք ստորին երկար թև ունեցող խաչեր են, որոնց լայնացող թևերը պսակվում են զույգ բլթակներով: Թևավոր խաչի մի մաս էլ ծագում է Մեծարանից սուրբ Հակոբավանքից (նկ. 61, 62): Այն հավասարաթև խաչ է և առնչված է շրջանի մեջ: Թևերի լայնացող հատվածներն ու խաչահատումն ընդգծված են մեկական բլթակով: Ինքը՝ շրջանն իր հերթին հենվել է ծավալա-քանդակային արմավագարդի վրա, որն էլ հավանական է, ստորին մասի ելուստով ամրացվել է խաչակալին: Շրջանի մեջ ներառված ծավալային խաչի մի բեկոր էլ հայտնի է Գյավուրկալայի պեղումներից: Նմանատիպ թևավոր խաչի և արմավագարդի բեկորներ են գտնվել և Տիգրանակերտի միջնաբերդի պեղումների ժամանակ: Հակոբավանքի օրինակին մոտենում է Տիգրանակերտի պեղումներից հայտնաբերված խաչի և այն ներառող շրջանի երկու բեկոր, որոնց վրա ներքուստ պահպանվել են խաչաթևերի միացման ջարդվածքները (նկ. 63, 64): Տիգրանակերտի մեծ եկեղեցու պեղումներից հայտնաբերվել են նաև թևավոր խաչի և արմավագարդի բեկորներ, որոնք սակայն, ծավալի և զարդարման առումով, առանձնանում են քննարկված օրինակներից: Ի մասնավորի՝ ծավալային խաչի թևի հարդարանքն ավելի հիշեցնում է ականագարդ խաչ, նման, այն հոյակապ օրինակներին, որ կարելի է տեսնել Աղիտուի մահարձանի քանդակներում: Բացառված չէ, որ հենց Տիգրանակերտն ու շրջապատն են, շուրհիվ իրենց հզոր և որակյալ քարհանքերի, հաղիսացել նման կոթողների պատրաստման հիմնական կենտրոններից մեկը:


Գծ. 16, 17, 18, 19. Խաչային հորինվածքներ, 5–7-րդ դարեր, քարայրային-պաշտամունքային համալիր, Արցախի Տիգրանակերտ

**Բ. Քանդակային խաչերը
և խաչային հորինվածքները**


Վաղքրիստոնեական արվեստում խաչի պատկերագրության ձևավորման սկիզբ է համարվում Կոստանդիանոս Մեծի տեսիլքը (312թ.), որը հիմք հանդիսացավ մենագրային «քի-ռո» և նրա հետևությանը՝ հավասարաթև խաչի պատկերագրության պաշտոնականացման համար: Խաչի կենսածառային պատկերագրությունն էլ կապվում է Կոստանդիանոսի մոր՝ Հեղինեի կողմից խաչափայտի գյուտի հետ, որից էլ ծագում է ձգված համամասնություններով խաչը:

Վաղ եկեղեցիներում խաչի գաղափարաբանության ու պատկերագրության մշակմանն ուղղված ջանքերն ընթացել են հենց այս համաքրիստոնեական ծիրի մեջ: Քննությունը պարզում է, սակայն, որ Հայաստանում և Կովկասյան տարածաշրջանում ավելի մեծ հեռանկարներ ունեցավ ձգված համամասնություններով խաչը, որը տարածվեց հավասարաթև խաչերից մի փոքր ուշ՝ 5-րդ դարի կեսերից սկսած: Դրանք պատկերվում են բարձունքի, աստիճանների, գնդի վրա կանգնեցված, արմավագարդով ու շուշաններով հարդարված, թևերն ու խաչահատումը շեշտվում են ակ-բլթակներով: Ձգված համամասնություններով խաչը համադրեց խաչի հաղթական ու փրկագործական գաղափարաբանությունը և պատկերագրորեն հանդես եկավ որպես տիեզերքի կենտրոնում՝ Դրախտային լեռան վրա կանգնեցված կենաց ծառ՝ հղելով խաչելությունը, բայց և ցուցելով ապագան:


Արցախյան հորինվածքները ծագում են Խաչենագետի ներքնահովտից, Ծիծեռնավանքից, Ճարտարից, Բերդաշենից, Բոխ




Գծ. 16



Գծ. 17




Գծ. 18




Գծ. 19

Եղցի վանքից: Դրանք տեղադրված են եկեղեցական պատերի ու ճարտարապետորեն կարևոր մանրամասների վրա (սկ. 65, 66), հարդարում են կոթողների խոյակներն ու պատվանդանները, երբեմն էլ՝ այլ բաղադրիչները:


Առանձնակի է կանգնած Տիգրանակերտի մերձակայքի ժայռափոր եկեղեցական համալիրը, որտեղ խաչային հորինվածքներ, հունարեն և հայերեն արձանագրությունները ուղեկցում են ուխտավորին՝ համալիր տանող ժայռափոր ճանապարհի ողջ եր-



Գծ. 20



Գծ. 21



Գծ. 22

կարությամբ, մի տեսակ նմանվելով խաչի ճանապարհին, ապա պսակում եկեղեցու, գավթի ու տապանաբակի ժայռերն պատերը (նկ. 67–71): Խաչերով են պսակվել նաև համալիրի ստորոտով անցնող ժայռափոր ջրանցքի պատերը: Խաչային հորինվածքների նման տեղագրությունը հիմք է տալիս խոսելու ժայռերն միջավայրի խաչայնացման մասին. լանդշաֆտի սրբազ-

Գծ. 20, 21. Շքամուրքի խոյակներ, 5–6-րդ դարեր, մեծ եկեղեցի, Արցախի Տիգրանակերպ

Գծ. 22 Կավե սկավառակ՝ հայերեն արձանագրությամբ, 5–7-րդ դարեր, Արցախի Տիգրանակերպ

նացման մի ձև, որ հետագա դարերում իրականացված ենք տեսնում նաև խաչքարերի օգնությամբ, Հայաստանի տարբեր գավառներում, այդ թվում և Արցախում:

Երբեմն նման խաչերը կազմում են ավելի տարողունակ հորինվածքի մի մասը և պսակում են բուսա-թռչնային հավելումներ կրող ձողերը (Ծիծեռնավանք, նկ. 72, Տիգրանակերտի ժայռափոր համալիր, գծ. 16–19): Վաղքրիստոնեական խաչային հորինվածքների վերջին գյուտերը, հատկապես շրջանի մեջ ներառված և ձողաբարձ օրինակները, հիմք են տալիս դրանք համեմատելու իտալական բարձր խաչերի հետ և խոսելու վաղքրիստոնեական ընդհանուր սկզբների ավելի ընդարձակ տարածաշրջանային դրսևորումների մասին (Petrosyan 2012):

Պատկերագրական առանձին շարքեր են կազմում խաչը լուսատուների հետ, և հատկապես խաչը այգային միջավայրում թեմաները, որոնց օրինակները տալիս են Տիգրանակերտը (գծ. 20, 21), և Ծիծեռնավանքը (նկ. 73–77): Պատկերի փոխարեն նշանի ընտրությունը և նրա լայնատարած կիրառությունը Հայ եկեղեցու և նրա հետևությանը Աղվանից եկեղեցու դավանական ու պատկերագրական առանձնահատկություն էր: Որպես օրինակ բերենք Տիգրանակերտի մեծ բազիլիկ եկեղեցուց գտնված կավե սկավառակը, որի դիմերեսի տղամարդու ուրվագծային պատկերն ուղեկցվում է «Ես՝ Վաչ[ագան] ծառայ Տ[եառ]ն Ա[ստուծոյ]» հայերեն արձանագրությամբ, իսկ դարձերեսին պատկերված է խաչը շրջանի մեջ՝ «Ա[ստուծոյ]» հայերեն համառոտագրությամբ (գծ. 22, նկ. 78, 79), կամ էլ Բերդաշենի գերեզմանասալը՝ խաչաքանդակով և հայերեն վաղ արձանագրությամբ (նկ. 80):



Գլուխ չորրորդ

Խաչքարային մշակույթը

Ներածություն

(Նկ. 81 – 95, գծ. 23, 24)


Ներածություն: Խաչքարը, որպես կանոն, բացօթյա միջավայրում ուղղաձիգ կանգնած, աշխարհի չորս կողմերի հանդեպ հստակ կողմնորոշում ունեցող քարասալ է, որի արևմտահայաց տափակ երեսը զբաղեցնում է կենտրոնում տեղադրված խաչից և նրան ուղեկցող բուսաներկրաչափական զարդերից, երբեմն էլ թռչունների, կենդանիների և մարդկային կերպարներից բաղկացած քանդակային հորինվածքը: Խաչքարերի մի զգալի մասը կրում է հայերեն արձանագրություններ, որոնք հայտնում են, թե դրանք ո՞ւմ են նվիրված, ովքեր, երբ, ի՞նչ հանգամանքներում և ինչու՞ են կանգնեցվել, ովքեր են վարպետները և այլն: Խաչքարը հայ մշակույթի ինքնատիպ զարգացման արգասիքն ու ցուցիչն է, հայ ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններից մեկը: Մերձավոր Արևելքի քրիստոնյա ժողովուրդներից և ոչ մեկը նման կոթողներ չի ստեղծել, ուստի խաչքարը նաև հայ մշակույթի ամենատարբերիչ նշաններից է: Իր զարմանահրաշ քանդակային հորինվածքներով, խաչի փրկագործական խորհրդաբանությամբ և քարի հավերժություն ներշնչող մշտականությամբ՝ այն եղել է հայ հավատացյալի ամենապաշտելի, իսկ բացօթյա տեղադրությամբ և բազմաքանակությամբ՝ նաև ամե-

նամատչելի սրբություններից մեկը (Պետրոսյան 2008, 9; Petrosyan 2015, 3–4):

Արցախի վանքերում, գյուղատեղիներում, հին գերեզմանոցներում, ճանապարհների խաչմերուկներում, աղբյուրների մոտ, բարձունքների վրա և այլուր պահպանված հազարավոր խաչքարերն այդ տարածքների հայկականության ամենավառ ապացույցներից են (Նկ. 81–95, գծ. 23, 24): Արցախի հանրապետության անշարժ հուշարձանների ցանկի համաձայն՝ պաշտոնապես վավերացված խաչքարերի թիվը հասնում է մոտ երկու հազարի:

Չնայած նման մեծաքանակությանը, ժողովրդի կողմից դրանց հանդեպ տածվող հատուկ ակնածանքին, և ի վերջո հայ ինքնության ամենագորավոր փաստարկը լինելու հանգամանքին, Արցախի խաչքարերն այսօր էլ մնում են գիտականորեն չհետազոտված և հիմնականում չհրատարակված, դրանց առանձին օրինակների ոչնչացումը, տեղաշարժն ու անհետացումը հաճախ մնում են աննկատ: Իրավիճակը ողբերգական է 44-օրյա պատերազմի հետևանքով Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում, ուր հարյուրավոր խաչքարեր են մնացել և որոնց վիճակի մասին տեղեկություններ չկան:

Խորհրդային տարիներին Արցախի խաչքարերով նույնիսկ հետաքրքրվելը առաջ էր բերում ադրբեջանական իշխանություննե-



Գծ. 23. Խաչքարեր
եկեղեցական
կառույցների վրա,
Հանդաբերդի վանք


րի և Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական կառույցների դժգոհությունը: Խաչքարերի հետազոտությունը չէր խրախուսվում նաև Խորհրդային Հայաստանի կոմունիստական և նույնիսկ ակադեմիական կառույցների կողմից: Ավելին, անցած դարի 60–70-ական թվականներից սկսած՝ Ադրբեջանի իշխանությունների և ակադեմիական շրջանակների կողմից Արցախի մշակութային ողջ ժառանգությունը հայտարարվեց «աղվանական», իսկ ադրբեջանցիներն էլ՝ աղվանների հետնորդներ (Petrosyan 2020B): Ադրբեջանցի հետազոտողներն իրենք դարձան Ադրբեջանական ԽՍՀ և դրան կից Հայկական ԽՍՀ տարածքների խաչքարերի «հետազոտության նախաձեռնողներ» (Гешев 1984, 100–104; Ахундов, Ахундов 1983; Ахундов 1986, 236–252): Ցավոք, անշեղորեն հետևելով բունիաթովյան տխրահռչակ «տեսությանը», խաչքարերին վերաբերող ադրբեջանական էքսկուրսները հետապնդում էին միայն մեկ նպատակ. Ադրբեջանական ԽՍՀ-ին բռնակցված հայկական պատմական տարածքների և Հայկական ԽՍՀ՝ Ադրբեջանին հարակից տարածքների խաչքարերը, ինչպես նաև քանդակագործական ու ճարտարապետական ողջ ժառանգությունը հայտարարել աղվանական-ադրբեջանական: Նման միտումնավորությունն էլ պայմանավորել է ադրբեջանցիների անհերթեթ մեթոդաբա-

նությունը. ստեղծել խաչքարերի ադրբեջաներեն անվանաբանություն (սիշանդաշ, խաչդաշ), խաչքարային հորինվածքի ընդհանրական որոշ բնութագրեր (օրինակ՝ կառուցվածքի եռամասնությունը համարել առանձնահատուկ միայն Արցախի, Ջուղայի, Սյունիքի, Գեղարքունիքի խաչքարերի համար կամ էլ հորինվածքին վերագրել մտացածին հատկանիշներ (օրինակ՝ քրիստոնեական պատկերագրական թեմաների կամ կերպարների համադրություն միթրայական, մոնղոլական կամ էլ այլ օտար տարրերի հետ), որոնք իբր առանձնացնում են դրանց հայկական խաչքարերի հիմնական գանգվածից: Արկածախնդրական բնույթ կրող այդ փորձերը ժամանակին արդեն իսկ արժանացել են հայագետների հիմնավոր հակահարվածին, որը ներառում էր զեղծարարության քաղաքական, տեսական, պատմամշակութային և, մասամբ էլ, փաստացի առումները: Միաժամանակ նաև զգացվում էր, որ խաչքարագիտությունը մեծ անելիքներ ունի խաչքարերի ռեգիոնալ առանձնահատկությունների վերհանման ու մեկնաբանման, գործառույթների հստակեցման, խաչքարային հորինվածքի կառուցվածքային, պատկերագրական և իմաստաբանական քննության ասպարեզում: Ներկա շարադրանքում մենք կփորձենք վերոհիշյալ խնդիրների պարզաբանմանը համընթաց՝ անդրա-

դառնալ նախ և առաջ ադրբեջանական այն պնդումներին, որոնց հիմքում ընկած է խաչքարերի վերաբերյալ գիտելիքի ակնհայտ պակասը, թերհասկացությունն ու փաստերի խեղաթյուրումը: Արցախի, Ջուղայի, Գեղարքունիքի խաչքարերն աղվանական հայտարարելուց հետո էր, որ հայագետները ստիպված եղան մի քանի հպանցիկ անդրադարձ անել դեպի Արցախի խաչքարերը: Ընդամենը, ադրբեջանական հարձակումներին տրվող հակահարվածները, եթե քաղաքացիական դիրքորոշման առումով իրոք համարձակ քայլեր էին, գիտական առումով՝ ավելի հրնթացսարձագանքներ էին, բայց ոչ խաչքարային մշակույթի ընդհանուր կամ առանձին դրսևորումների մանրամասն քննության հիմամբ արվող եզրակացություններ:

Ընդհանրապես, Արցախի վաղ և հատկապես միջնադարյան մշակույթը հետազոտողը կամա թե ակամա ստիպված էր լինում անընդհատ փաստարկներ բերել հոգուտ Արցախի ժողովրդի ու մշակույթի հայկականության, թեև Արցախի թե՛ ժողովրդի, և թե՛ մշակույթի էթնիկ կերպարն ավելի քան հստակ է: Եվ դրա հիմնական պատճառը Ադրբեջանի կողմից երկրամասի հայ մշակույթային ժառանգության օրեցօր ընդարձակվող բռնաշարժումն էր:

Ինչպես ապացուցված է պատմագիտական մանրամասն քննությամբ, Մեծ Հայքի արևելյան երկու խոշոր նահանգները՝ Ուտիքը, ապա և Արցախը՝ 428–451 թվականների ընթացքում Սասանյան Պարսկաստանի կողմից անջատվեցին Հայաստանից և միացվեցին Քրոնի ձախափնյակն ու Մեծ Կովկասի հարավային լեռնափեշերն զբաղեցնող և Աղվանից անունը կրող թագավորությանն (ապա՝ մարզպանությանն) ու եկե-



ղեցուն: Նախնական իրավիճակի և նրա փոփոխության պատմա-աշխարհագրական հստակ բնութագիրը տրված է 7-րդ դարի Աշխարհացոյցում. «Աշխարհն Աղբանիա, այսինքն՝ Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչև [ի Կասպից ծովն] և ցՀայոց սահմանն, առ Կուր գետով, թէպէտ և աստի ցԿուր զամենայն սահմանս հանեալ է ի Հայոց: Բայց մեք ասասցուք զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ և Կովկաս լերինն» (Երեմյան 1963, 105: Խնդրի մանրամասն քննությունը համապատասխան սկզբնաղբյուրների հղումով տե՛ս Ուլուբաբյան 1975, Հարությունյան 1976, Тревер 1959, 200–201, Акопян 1987, 109–142. Новосельцев, 1991): Ձախափնյակի համեմատ շատ ավելի զարգացած հայաբնակ Արցախն ու Ուտիքը 5–6-րդ դարերի ընթացքում դարձան նոր կազմավորման վարչական-քաղաքական և հոգևոր-մշակույթային հիմնական դերակատարը և, այդ իսկ պատճառով, սկսեցին Քրոնի ձախափնյակի հետ կիսել և կազմա-

Գծ. 24. Մարտոի շքամուրքի ձևավորում, 13-րդ դար, Վանառի սուրբ Սյրեփանոս

վորման Աղվանից անունը: 7-րդ դարի վերջերից ի վեր՝ բուն Աղվանքի տարածքում արաբ նվաճողների ճնշման տակ սկսեց մարել քրիստոնեությունը (այն պահպանվեց միայն սակավաթիվ ուղիական համայնքում), Քոի աջափնյակի հայ բնակչությունը՝ ընդհուպ մինչև 19-րդ դարը, փաստորեն դարձավ Աղվանից եկեղեցու անվան ու քրիստոնեական ավանդույթների համարյա միակ կրողը: Անցած դարի 60-ական թվականներից ի վեր, երբ Ադրբեջանը ձեռնարկեց Ադրբեջանական ՍՍՀ տարածքում և ՀՍՍՀ հարակից շրջաններում գտնվող հայկական մշակութային ժառանգության բռնաշարժումը, «Աղվանից» անվանումը դարձավ արցախահայության էթնիկ կերպարի և մշակույթի հայկականության մերժման հիմնական խաղաքարտը (Petrosyan 2020B): Եթե Արցախն ու Ուտիքը ներառող եկեղեցին կոչվում է աղվանական (և երբեմն Աղվանք կամ Առան էր կոչվում նաև Քոուի աջափնյակը), ուրեմն, ըստ ադրբեջանցի հետազոտողների, աղվաններ են նաև նրա հետևորդներն ու նրանց ստեղծած մշակույթը: Հոգ չէ, որ Արցախի և Ուտիքի բնիկները խոսել ու գրել են բացառապես հայերեն, որ Աղվանից եկեղեցին Հայ եկեղեցու քույր եկեղեցին էր, որ երկու եկեղեցիների լեզուն հայերենն էր, որ դավանական սկզբունքներն ու ծիսական պրակտիկաները նույնական էին առնվազն 7-րդ դարի վերջերից սկսած, որ նրանց կիրառած մշակութային համալիրները, ներառյալ և խաչքարերը, բնութագրական են միայն հայ մշակույթին:

Եթե փորձենք համառոտակի բնութագրել Արցախի խաչքարերը հայ խաչքարային մշակույթի համակարգում, ապա կարելի է շեշտել երկու կարևոր բնութագիր: Առաջին՝ Արցախի խաչքարերը երևան են բերում դավանական լիակատար նույնակա-

նություն հայ խաչքարային ողջ մշակույթի հետ: Ասվածի լավագույն վկայություններն են Արցախի խաչքարերի՝ Հայաստանի այլ տարածքների խաչքարերի հետ նույնացող գործառույթները, քանդակային հորինվածքի սկզբունքորեն նույն կառուցվածքային լուծումները, համանման քրիստոնեական-կանոնիկ պատկերագրական թեմաներն ու կերպարները:

Երկրորդ՝ Արցախի խաչքարերը վկայում են, որ խաչքարակերտման գործընթացի նկատմամբ այստեղ եղել է եկեղեցական-կանոնիկ վերահսկողության ավելի թույլ աստիճան, ինչը պայմանավորել է ժողովրդական պատկերացումների ավելի ընդարձակ դրսևորումներ: Տեղական բուսաշխարհը, մահկանացուներին ներկայացնող զանազան քանդակային թեմաներն ու կերպարները առանձնահատուկ հմայք են հաղորդում Արցախի խաչքարային մշակույթին, այն դարձնում տարազը, ռազմարվեստը, ընտանեկան հարաբերությունները, զանազան ծեսերն ու հավատալիքներն արտացոլող հարուստ ու եզակի պատկերասրահ:

Ա. Վաղ խաչքարերը. 9-11-րդ դարեր

(Սկ. 96 - 131, գծ. 25 - 27)

Խաչքարերի ծագման գործում կարևոր դերակատարում է ունեցել հայ եկեղեցու առանձնահատուկ դիրքորոշումը դեպի խաչապաշտությունը: Խաչելության հետևանքով ի դեմս խաչի՝ Քրիստոսին և նրա գործությունը տեսնելու դասական հիմնավորումը տվել է դեռ Դավիթ Անհաղթը, բացատրելով, որ Քրիստոսի խաչելությամբ խաչն ընդմիջտ իր վրա է վերցրել Աստծուն ու նրա գործությունը (Դավիթ 1932, 13, 15).

խաչը Քրիստոսի ներկայությունն է հավաստում, նրան աղոթելով՝ Քրիստոսին են աղոթում, նրան համբուրելով՝ Քրիստոսի գործության հետ են հաղորդակցվում: Հայ եկեղեցու հետագա դավանաբանական որոշումների ու մեկնությունների (Դվինի 554 թվականի ժողովը, որը «Երից սրբասացության» աղոթքում հավելեց Պետրոս Թափիչի բանաձևի՝ «որ խաչեցար վասն մեր» հատվածը, 8-րդ դարում Հովհան Օձնեցու կողմից փրկչական պատկերի ու խաչի հավասարգործության հիմնավորումը, 11-րդ դարում Անանիա Մանահնեցու հավաստումը՝ թե «պաշտելի և երկրպագելի յարարածս միայն հաչն է վկայութեամբ մարգարեիցն» և այլն) և քարոզչության արդյունքում խաչը դարձավ միջնադարյան հայ հանրության ինքնության ամենաառաջնային ու անմիջական նշանը: Այն աստիճան բնորոշ, որ հայ եկեղեցու մեկ այլ տեսաբան՝ Մխիթար Գոշն արդեն 13-րդ դարում խոստովանում է, որ չափից դուրս ջանքերն այդ ուղղությամբ հասցրել են խաչի ապաստեցմանը. «Զի որպէս Հայք զխաչ անարգեցին՝ արհամարհանաւք յամենայն տեղիս կանգնելով, նոյնպէս և Հոյնք և Վիրք զպատկերս» (Գոշ 1996, 354, 372): Քննությունը ցուցում է, որ հայ միջնադարում խաչանշանի պատկերումը վեր էր ածվել սրբազան-մոգական և հոգեբանական մի գործողության: Արդյունքում, հոգևոր շատ կառույցների պատերը պատվում էին տասնյակ ու տասնյակ պարզունակ գծախաչերով: Եթե չլիներ խաչի այս համընդհանուր, համատարած ու ամենառիթմ գործարկումը, անշուշտ, չէր ստեղծվի և խաչքարային լայնածավալ մշակույթը:

Աղվանից եկեղեցին, որի մտավոր ներուժը Արցախի և Ուտիքի հայությունն էր, խաչի առանձնահատուկ ընկալման համակարգը


մշակել է հայ եկեղեցու հետ համատեղ: Բնութագրական է, որ այդ մշակման մեջ ներգրավված էին եկեղեցիների ամենաբարձր դերակատարները (օրինակ, 6-րդ դարի կեսերին Հայոց Հովհաննես կաթողիկոսի թուղթն ուղղված Աղվանից Աբաս կաթողիկոսին, որն ըստ էության Հայոց և Աղվանից եկեղեցիների դավանաբանության համառոտ թվարկումն է, հատուկ շեշտվում է սուրբ եռասացության կարևորությունը, նգովվում են բոլոր նրանք, ովքեր կշեղվեն խաչն ընկալելու այն սկզբունքներից, որ ձևակերպել է Դավիթ Անհաղթը, 7-րդ դարի վերջերին Հովհան Մայրագումեցու թուղթն ուղղված Արցախի Մեծ Կողմանց Դավիթ եպիսկոպոսին և այլն) հավաստում են, որ դավանական հիմնախնդիրները երկու եկեղեցիները մշակում էին համատեղ՝ հայ եկեղեցու հեղինակավոր առաջնորդությամբ:

Սակայն պիտի նկատի ունենալ, որ արաբական դաժան լուծն ավելի քան երկու դար արգելում էր քրիստոնեական նշանի բացօթյա կիրառությունը (Պետրոսյան 2008, 95–96): 7-րդ դարի վերջերից մինչև 9-րդ դարի կեսերը բացակայում են բացօթյա խաչային հորինվածքներն ու խաչակիր կոթողները: Օրինաչափ է, որ առաջին բացօթյա խաչակիր կոթողները նորից երևան եկան միայն 9-րդ դարի կեսերից, երբ տեղական քաղաքական ուժերն՝ ի դեմս զանազան իշխանությունների և թագավորությունների, կարողացան իրենց գերակայությունը հաստատել տարածքի վրա: Այսպիսով, կարելի է հավաստել, որ խաչքարի ծագումը ոչ թե սոսկ դավանական, այլ դավանական-քաղաքական գործընթաց էր:


Փաստերը ցուցում են, որ Արցախն առաջիններից մեկն էր, ուր 9-րդ դարի կեսերին, դավանականին զուգահեռ, ստեղծվեցին քա-

Գծ. 25. Վաղ խաչքարեր՝ պարի շարվածքում, Հանդարերդի վանք

Գծ. 26. Խաչքարի պարվանդան հայերեն արձանագրությամբ, 853թ., Մեծարանից սուրբ Հակոբավանք



Գծ. 25



Գծ. 26

ղաքական նախադրյալներ խաչի բացօթյա պաշտամունքի և խաչքարի երևան գալու համար (գծ. 25): Այսպես, խաչքար կանգնեցնելու մասին առաջին փաստացի հիշատակությունը մեզ հասել է Արցախի Մեծարանից սուրբ Հակոբավանքից (նկ. 96, գծ. 26): Ցավոք պահպանվել է միայն կոթողի պատվանդանը՝ արձանագրությամբ հանդերձ. «:ՅԲ: (853թ.) թուականութեանս հայոց, ի ժամանակս Յովանիսի, Աղվանից իշխանի եւ Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս


կանգնեցի [սուր]ը [խա]չս...» (ԴՀՎ 5, 12): Ժամանակագրորեն երկրորդ տեղեկությունը նույնպես Արցախից է, Վաղուհաս գյուղում (նկ. 97, 98, գծ. 48): Կոթողն իրենից ներկայացնում է ձգված համամասնություններով (չափերը՝ 1,50×0,50×0,30 մետր) կամարաձև վերնամասով անմշակ մի սալ, որն ուղղակի խրվել է հողի մեջ: Խաչն ունի լայն ու կարճ թևեր, որոնք ավարտվում են կլոր գնդերով: Այն հենվում է երկաղեղ արմավազարդի վրա, վերևից դեպի խաչահատումն են իջնում խաղողի ողկույզների նմանակումները: Հորինվածքը ստացվել է ետնախորքը ոչ խոր ու լայն ակուններով փորագրելու միջոցով: Արձանագրությունն՝ անկանոն երկաթագրով, փորագրված է հորինվածքից ներքև: Քանի որ մակերևույթը հարկ եղած չափով չի հարթեցվել, գրիչը շրջանցել է ոչ ողորկ հատվածները. «Թին :ՅԺԵ: (866թ.) էր. եւ Սարգիս կազնեցի զխաչս. որք երկրպագեք յաղաթ[ս] յիշեց[եք]» (ԴՀՎ 5, 113): Այս փաստերը վկայում են, որ Արցախը ոչ միայն ներառված էր խաչքարակերտման գործընթացի մեջ, այլև հնարավոր է, որ որոշ քայլեր այստեղ՝ կապված քաղաքական իրավիճակի հետ, ավելի վաղ կարող էին տեղի ունենալ:

Վաղ խաչքարերից մեկը, որ ենթակա է մանրամասն քննության, գտնվում է Գեղարքունիքի Մեծ Մասրիկ գյուղի հին գերեզմանոցում (նկ. 99, 100, գծ. 52), որն այդ ժամանակ գտնվում էր Սյունյաց և Աղվանից (այսինքն՝ Արցախ-Ուտիքի) իշխանության կազմում: Սալին տրվել է վերնում կամարաձև, դեպի ստորոտն աստիճանաբար ու համամասն նեղացող տափակ ծավալ (չափերը՝ 3,0×1,50(1,15)×0,35 մետր): Հարթեցվել է և սալի թիկունքը, որի վրա էլ փորագրվել է կանոնավոր տառերով արձանագրությունը. «:ՅԼ: (881թ.) թվականութե-

անս հայոց, եւ Գրիգոր Ատրնէրսեհեան, Միւնեաց և Աղվանից իշխան կանգնեցի զ[ս]խորք նշանս աւգնական հաւատացելոց. որք երկրպագէք սուրբ խա[չ]իս Քրիստոս]ի, զիս յաղաթս յիշեսցիք» (ԴՀՎ 4,334): Սալի արևմտահայաց երեսն ընդգծվում է ելնդավոր անգարդ եզրագոտիով. մի մանրամասն, որ կարելի է 9–10-րդ դարի առաջին կեսի խաչքարերի բնութագրական տարրերից մեկը համարել: Հորինվածքն ստացվել է ետնախորքի հեռացման, ստացված զարդերի հետագա լրացուցիչ մշակման միջոցով, ինչը նույնպես խիստ բնութագրական է վաղ խաչքարերի համար: Վարպետն ինչ-ինչ պատճառներով կիսատ է թողել խաչի ձախ հորիզոնական թևի և խաղողի ողկույզների մշակումը: Թեթևակի ձգված համամասնություններ ունեցող խաչն ընդգծված է փորագիր եզրագծերով և ավարտվում է ամեն մի թևում երկուական փոսիկավոր բլթակներով: Խաչահատումը շեշտված է պարզ վարդյակ-բլթակով: Խաչը հենվում է եռաստիճան պատվանդանի վրա, որի ստորոտից ծագում են մինչև հորիզոնական թևերը հասնող արմավագարդերն ու պատվանդանի աստիճանները հարդարող շուշան կամ լոտոս հիշեցնող թուփը՝ տերևներով ու կենտրոնական ծաղկով:

Այս խմբի մեջ են մտնում նաև պարզ ձևավորված մի շարք խաչքարեր, վավերացված բազմաթիվ հուշարձաններում, ուր ետնախորքի հեռացումով պատկերված են լայնացող թևերով, հաճախ երկբլթակ ելուստներով խաչեր (նկ. 101–107) կամ ետնախորքի հեռացման ու ակոսային փորագրումով լայնացող թևերով խաչեր (նկ. 108–114, գծ. 27): Ուշագրավ է Առաջաձորի 971 թվականի օրինակը, ուր արդեն քիվն ու եզրա-

գոտիները հարդարված են շրջանի մեջ ներառված խաչերով (նկ. 115, նման օրինակներ՝ նկ. 116, 117): Նույն ժամանակին է վերաբերվում և Ջորախաչի վանքի անարձանագիր խաչքարը, ուր խաչի թևերն արդեն ավարտվում են եռաբլթակ երկատուներով, իսկ հորինվածքը լրացված է ակնթագարդերով, խաչաթևերի տակի թռչուններով և հյուսկեն եզրագոտով (նկ. 118): Նշենք նաև Քարվաճառից ծագող կրաքարե սալիկը (նկ. 119): Նրա քառանկյուն խորանը երիզված է պարզ ժապավենահյուսքով, աստիճանաձև պատվանդանի վրա (այն այժմ հազիվ է նշմարվում) կանգնեցված խաչն ունի սեղմված համամասնություններ, հաստ, պարանահյուսերով հարդարված թևեր, որոնք ավարտվում են երկուական ութաթերթ վարդյակ-կոճակներով. նման մի վարդյակ էլ հարդարում է խաչահատումը: Տախտակը ներքնամասում ունի միջանցիկ անցքով և սղոցաձև ատամիկներով ելուստ (որի մի մասը ջարդված է)՝ ուշագրավ մի մանրամասն, որը թերևս կապ ունի կիրառության ոլորտի կամ գոնե ձևի հետ: Արձանագրությունը փորագրված է թիկունքին (նկ. 120) և, ակնհայտորեն, երեք տարբեր գրիչների (և ժամանակների) գործ է: Բուն հորինվածքի կերտման ժամանակին վերաբերող մասը փորագրված է կանոնավոր երկաթագրով, տառերը համաչափորեն տեղադրված են կանոնավոր գծված տողերի միջև. «:ՅԿԵ: (916) թըւականութեանս հաոց որ եղև. Ա[ստուա]ծ շնահատր արա(ս)ցէ»: Հավանական է, որ արձանագրությունը վերաբերում է ոչ թե բուն խաչաքանդակին, այլ՝ դատելով «Ա[ստուա]ծ շնահատր (այսինքն՝ շնորհավոր) արասցէ» արտահայտությունից, ինչ-որ մի հարմարանքի կամ իրի, որի մասն այն կազմել է:



Գծ. 27. Խաչքար, 9–10-րդ դարեր, Հանդաբերդի վանք

11-րդ դարում վերջնականապես ձևավորվում է խաչքարային հորինվածքի կառուցվածքը. խաչատակի վարդյակ, խաչախորան, զարդարուն եզրագուտիներ և քիվ: Երկրորդ կարևոր ձեռքբերումը հյուսածո եղնավոր գծերի և ժապավենների օգտագործումն էր՝ որպես հիմնական հորինվածքաստեղծ և հորինվածքի բաղադրիչներն իրար կապող միջոց: Այս գարթոնքը նախ տեսնում ենք Անիում և շրջակայքում, որն աստիճանաբար տարածվեց դեպի արևելյան նահանգներ (Կոտայք, Վայոց Ձոր, Սյունիք), ինչը Բագրատունյաց թագավորության քաղաքական և մշակութային ազդեցության արդյունք էր: Բայց եթե անիական ոճը հիմնականում դիմում էր երկրաչափական գարդերին՝ Արցախում, երկրաչափականին զուգահեռ, նախապատվությունը տրվում էր բուսապտղային և թռչնային թեմաներին: Անիական ազդեցության տեղական կատարման հիանալի օրինակներ են ներկայացնում Եղցաշենի, Մայրաչքի և Չարեքտարի վանքերի խաչքարերը (սկ. 121–124): Հատուկ նշելի է և Ամարասի խաչքարը՝ քիվի և խաչի վերնամասի պտղային և թռչնային ձևավորումներով (սկ. 125, 126): Ուշագրավ է, որ խաչքարի արձանագրությունը հայտնում է նաև խաչքարի ու այն կերտող վարպետի անունները՝ «Մ[ուր]ք Ա[ստուա]ծ/ած/ին: Ի թվականիս Հաոց :ՇԽ: (991թ.) էր: Ես Աբրեհամ երեց կանգ/նեցի. զիս յաղաթս յիշել ի Տ[է]ր: / Ես Ղազար կազմեցի. զիս յիշեցէք ի Քս ի Տր/»: Այստեղ նկատենք, որ Արցախի, Ուտիքի և Բուն Աղվանքի արձանագրություններում բացառապես օգտագործվում է Հայոց թվականը, ինչը Հայ և Աղվանից եկեղեցիների նաև տոմարական միասնության ապացույցն է: Այս շարքում առանձնանում է և նույն ժամանակին վերաբերող Շահնա-

սուրի թևավոր խաչքարը (սկ. 127)՝ հյուսածո խաչի համանման կատարումով, կանոնավոր արձանագրությամբ և հարավային կողմի պատկերված արևային ժամացույցով, ինչը խաչքարի վրա արևային ժամացույցի կիրառման միակ դեպքն է և ակնհայտորեն վկայում է խաչքարի շուրջն ընթացող պարբերական ծեսի մասին (սկ. 128, արձանագրությունը՝ «Զիս՝ զՍտեփա/նուս/ զկանգնող սրբոյ նշա/նիս յա/ղաւ/թս յի/շե[ս]ջ/իք»):

Ի հարկե, շարունակվում էր և ավանդական հորինվածքների կերտումը (սկ. 129, 130), ինչպես տեսնում ենք և Կարմիր վանքի 1074 թվականի խաչքարում, որի հորինվածքը ներկայացնում է ավանդական պարզ սխեման՝ բայց արդեն խաչաթևերի բուսականացմամբ (սկ. 131, արձանագրությունը՝ «Թին :ՇԻԳ: (1074 թ.) էր՝ մինչ Ջաջուռ Հասանայ որդիս փոխեցաւ ի Ք[րիստո]ս: Ես Վասակիկ կանգնեցի զխաչս: Յաղաթս յիշեաք ի Ք[րիստո]ս»):

Բ. 12-14-րդ դարերի խաչքարերը

(սկ. 132 - 181, գծ. 28 - 30)


12-րդ դարի վերջը նշանավորվեց խաչքարային մշակույթում մի շարք էական փոփոխություններով: Հաճախակի դարձավ գանազան պատվանդանների, խաչքար ներառող մատուռատիպ կառույցների, բարդ որմնափակերի ու տարածն քիվերի կիրառությունը: Տարածում ստացան կենտրոնական խաչին զուգահեռ հորինվածքի տարբեր մասերի քանդակները (արմավազարդի ուղղաձիգ բաղկացուցիչներ, քիվ, եզրագուտի և այլն), ավելի փոքր խաչաքանդակների տեղադրումը: Ձևավորվեց ուղղաձիգ արմավազարդի երկու նոր տիպ՝ բուսական

հենքի պսակումն օձաթռչնային հավելումներով, որոնք ավարտվում են ինքնախոցուտվող թռչուններով՝ ցուցելու հարության ավեգորիան (նկ.132–136) կամ արմավագարդի ուղղաձիգ բաղկացուցիչների վերածումը խաչակիր ձեռքերի, որոնք խորհրդանշում են Խաչի երկրորդ գալստյանը սպասող հավատացյալներին (նկ.137): Հղկվեց և մանրամասնվեց խաչքարային հորինվածքի կառուցվածքային, պատկերագրական և իմաստաբանական համակարգը, երբ խաչատակի գարդերը, որպես կանոն, ներկայացնում են երկրայինը, մարդկայինն ու անցյալը, քիվը՝ երկնայինը, սրբազանն ու ապագան, իսկ խաչը հանդես է գալիս որպես համընդհանուր միջնորդ այդ երկու ոլորտների միջև: Այս կառուցվածքն ու պատկերագրությունը կարելի է դիտարկել ընդհանուր հայկական հազարավոր խաչքարերի օրինակով և, անշուշտ, բացառություն չէր նաև Արցախը: Այս առումով ուղղակի գավեշտ է, երբ անցած դարի 80-ական թվականներին ադրբեջանցի «հետազոտողներ»՝ հայր և որդի Ախունդովները, նպատակ ունենալով Արցախի, Ջուղայի, Սյունիքի, Գեղարքունիքի խաչքարերը ներկայացնել որպես աղվանական հայտարարում էին, թե իբր Աղվանքի բոլոր հուշային կոթողներում՝ լինեն դրանք հեթանոսական, քրիստոնեական թե մահմեդական, «արտացոլված ենք գտնում աշխարհի եռամակարդակ մոդելը»՝ երկնային, երկրային և ստորերկրյա, և իբր, հենց դա է նրանց առանձնացնում, իրենց բնորոշմամբ, «Հայաստանի խաչքարերից» (Ахундов, Ахундов 1983, 4; Ахундов 1986, 238): Նկատենք, որ, ընդհանրապես, ցանկացած ուղղաձիգ կառույց՝ լինի դա եգիպտական բուրգ թե քոչվորի յուրտ, խաչքար թե միրաբ՝ մի ծայրով կանգնած լինելով երկրի վրա, իսկ մյու-

սով ցուցելով երկինքը, արդեն իսկ երևան է բերում տիեզերքի մոդելի եռամաս կառուցվածքը և նման համընդհանուր հատկանիշը դարձնել մշակույթի էթնիկ տարբերակիչ՝ ուղղակի անհեթեթություն է: Խաչքարի առանձնահատկությունը (անկախ նրանից, ծագում է այն Դադիվանքից թե Խծկոնքից, Ջուղայից թե Արագածոտնից) այն է, որ այդ եռամասնությունը *հստակ ու ակնհայտորեն արտահայտվում է քանդակային հորինվածքում, որը, ինչպես տեսանք, ոչ միայն բաժանվում է համապարասխան կառուցվածքային բաղադրիչների՝ այլև հագեցվում է համապարասխան նշաններով և կերպարներով:*

Այս ժամանակի ամենամեծ նվաճումը խաչքարի անհատականացումն էր, որը խթանեց արվեստի անկրկնելի օրինակների մի ընդարձակ շարքի ստեղծումը՝ ընդհուպ մինչև 14-րդ դարի երկրորդ քառորդը: Նկատելի են դառնում տարածաշրջանային տարբերությունները: 12-րդ դարից սկսած՝ խաչքարը դառնում է միջնադարյան գերեզմանոցի համապատկերի հիմնական տարրը, ձևավորվում են ընդարձակ խաչքարային դաշտեր (նկ. 87, 88, 92–94): Խաչքարը կանգնեցվում է հարթ կամ երկթեք տապանաքարի կամ թաղման արևելյան ծայրին՝ բարձր պատվանդանի վրա, այնպես, որ հանգուցյալի «հայացքն» ուղղված լինի դեպի խաչը:

Առաջանում են Հյուսիսային Հայաստանի (Լոռի-Տաշիր), Արագածոտն-Կոտայքի, Արցախի, Ջավախքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Նախիջևանի դպրոցները: Ընդորում, եթե խաչքարերի որոշ տիպեր բնորոշ էին միայն կոնկրետ տարածքների, ապա մի շարք տիպեր էլ բնութագրական էին ողջ երկրի համար: Երկրի տարբեր աշխարհնե-



Գծ. 28.
Խաչքար, 1194թ.,
Հանդարերդի վանք

րում իրար շատ նման խաչքարերի ստեղծումը, վարպետների մասին արձանագրական տեղեկությունների քննությունը հիմք է տալիս ասելու, որ տեղական դպրոցներին զուգահեռ, երկրում ձևավորվում էին շրջիկ վարպետների խմբեր, որոնք ստեղծում էին «ընդհանուր հայկական» օրինակներ: Կարող ենք նշել, օրինակ, Դադիվանքի զույգ խաչքարերի նմանությունը Պողոս վարպետի կողմից Գոշավանքում ստեղծած խաչքարերի հետ (սկ. 138, 139), կամ Բոհի Եղցի վանքում գործող Խաչինեկ Անեցուն (սկ. 140), որն անկասկած, Արցախ էր եկել Անիից, կամ էլ Մխիթար վարպետին՝ Թարթառի վերնահովտից, ով իրեն կոչում է «անվանի խաչգործ» (սկ. 141, 142):

Արցախը, տալով համահայկական դասական խաչքարերի բազմաթիվ օրինակներ

(սկ. 143–146, գծ. 28, 29), միաժամանակ առանձնանում է մահկանացուների ներկայացնող տարաբնույթ թեմաներով ու կերպարներով (տե՛ս *Խաչքարային պարկերաբան-դակը* բաժինը): Ընդորում, մահկանացուների ներկայացնող խաչքարերը բնորոշ են Արցախի ողջ տարածքին, դրանք շատ են հատկապես գյուղական գերեզմանոցներում (Պետրոսյան 2013):

13-րդ դարում լայն տարածում գտան և որմնափակ խաչքարերը: Խաչքարի «ճարտարապետականացմամբ»՝ ծեսի ու երկրպագության համար ավելի մատչելի ու հարմար պայմանների ստեղծումը վկայում է նրա ծիսական գործառույթների ընդարձակման մասին: Արցախի որմնափակ խաչքարերից հատկապես նշելի են Բոհի Եղցի վանքի (սկ. 147–150), Դահրավի (սկ. 151, 152), Սպիտակխաչ վանքի (սկ. 153) կոթողները (Կարապետյան 1983):

Հաջորդ կարևոր դրսևորումը եկեղեցական կառույցների խաչքարայնացումն էր, մի դեպքում նոր կառույցի մեջ հին խաչքարերի ներդրումով (Դադիվանք, Գուշավանք, Հանդաբերդի վանք, սկ. 154–157, գծ. 30), մյուս դեպքում՝ եկեղեցական կառույցը հենց հատուկ այդ նպատակով պատրաստված խաչքարերով կերտելը, որի գերազանց օրինակները տեսնում ենք Ծարում, Այծաժայռում, Բոհի Եղցի վանքում (սկ. 158–164):

Արցախյան վանքերում սովորույթ է դառնում զանգակատների բաց կամարը կամ կից տարածքը խաչքարերով լրացնելը (Դադիվանք, Խադարի վանք, սկ. 165–168):

Դառնալով առանձին խաչքարերի հորինվածքային ձևավորմանը, նկատենք, որ լայն տարածում է ստանում համակ հյուսկեն քանդակը, եզակի դեպքերում երկշերտ


Գծ. 29. Խաչքար, 1179 թ., Կոշիկ անապար

Գծ. 30. Ջանգակարան արևմտյան պարի հարդարումը խաչքարերով, 13-րդ դարի վերջ, Հանդարերդի վանք


և եռաշերտ: Երբեմն տեղադրվում են քրիստոնեական պատկերագրական թեմաները՝ Խաչի երկրորդ գալուստը, Ահեղ դատաստանը, Քրիստոսը՝ քառակերպ գահին, Մարիամը՝ մանուկ Հիսուսի հետ և այլն:

Առանձնակի նշելի են Դադիվանքի կրաքարից կերտված գույգ սլացիկ (լայնությունը երկարության միայն մեկ երրորդն է կազմում) խաչքարերը, որոնք կանգնեցված են զանգակատան առաջին հարկի կամարակապ խորանում (սկ. 138, 165): Ըստ էության, սալի նման սլացիկությունը, որի վրա պիտի ստեղծվեր ապագա քանդակը, որոշակի բարդություններ է հարուցել վարպետի հա-

մար: Կենտրոնական խաչի ընդունված համամասնությունը պահելու նպատակով՝ նա ստիպված է եղել խաչատակի հիմնական վարդյակին հավելել ավելի փոքրերը, որի հետևանքով հորինվածքի ամբողջականությունը փոքր-ինչ աղճատվել է (սկ. 167): Քանդակը, թեև շատ ավելի մակերեսային է, բայց պահպանված է երկշերտ (ձախ խաչքարի վրա) և եռաշերտ (աջ խաչքարի վրա) փորագրության սկզբունքը: Երկու խաչքարերի քիվերն էլ պատրաստված են առանձին քարակտորներից, ինչը կրկին շեշտում է քիվի անջատվածության պահը: Ձախ քիվի կենտրոնի խորանում քանդակված է Քրիստոսը գահավորակի վրա թեման



Գծ. 29



Գծ. 30

(սկ. 169): Քանդակն աչքի է ընկնում երկրաչափական ու բուսական մոտիվների հոյակապ համադրությամբ (սկ. 170), եզրագոտու ցանցկեն ետնախորքի վրա տեղադրված ելնդավոր արձանագրությամբ (սկ. 171), որը նոր երևույթ էր խաչքարային արվեստում: Արձանագրությունը հայտնում է, որ խաչքարերը կանգնեցվել են վանքի վանահայր Աթանասի պատվերով 1283 թվականին: Մանրամասն ու համաչափ քանդակի տեսակետից ատանձնանում է և Հաթերքի խաչքարը (սկ. 172), որն ամենայն հավանականությամբ, ստեղծվել է 13-րդ դարի վերջերին: Յուրօրինակ է սալի ծավալային լուծումը՝ երկթեք քիվ, որը պսակվում է շրջանաձև ելուստով և կարծեք փորձում է պատկերել եկեղեցական կառույց: Քիվի մանր քանդակների ֆոնին պատկերված է Աստվածածինը մանկան հետ հորիվածքը (սկ. 173):

Վերջին օրերին ուղղված պատկերագրական թեմաների կատարումով՝ աչքի են ընկնում Գոչավանքի և Հադրութի Սպիտակ խաչ վանքի խաչքարերը (սկ. 174, 176): Գոչավանքի երկու խաչքարերը կերտված են Ամարասի եպիսկոպոս, վանքի ներկա տաճարի հիմնադիր Վրթանեսի պատվերով 13-րդ դարի կեսերին: Խաչքարերն այնքան նման են իրար, որ նույն վարպետի կողմից պատրաստված լինելու հանգամանքը կասկած չի հարուցում: Խաչքարերն ունեն խոր և մանրամասն քանդակ, ուռուցիկ քանդակագարդ վարդյակներ, որոնց հետևանքով, զարդերը երկշերտի տպավորություն են թողնում: Հորինվածքներն ուշագրավ են հատկապես պատկերաքանդակների առումով: Երկու խաչքարում էլ խաչի ստորին թևը բռնել են երկու հրեշտակներ, ինչն ակնարկում է խաչի գալստյան թեման, իսկ քիվին՝ քառակերպերով շրջապատված սկավառակի մեջ՝ աթոռին

բազմել է Ամենակալը: Մի դեպքում դասն ընթանում է տասներկու առաքյալների հայցող կերպարների ուղեկցությամբ: Մյուս դեպքում (սկ. 175) պատկերված են Աստվածամայրն ու Հովհան Մկրտիչը: Բայց ամենաուշագրավն այն է, որ քառակերպերից այն ծնկաչոք աղոթողի դիրքով պատկերված է Վրթանես եպիսկոպոսը՝ գլխավերևում «Վրթ[անես] եպ[ի]ս[կոպոս]» համառոտագրությամբ, իսկ այն կողմում՝ հոտնկայս սուրբ Գրիգորիսը՝ լուսապսակով, այն ձեռքում խաչ, գլխավերևում համապատասխան մակագրությամբ՝ «Ս[ու]րբ Գրի[գորիս]»: Այսպիսով, բոլոր տվյալները հավաստում են, որ պատկերված են խաչի Երկրորդ գալուստը և Արդար դատաստանը (խնդրարկությամբ հանդերձ): Ջավեշտի և տգիտության մի յուրօրինակ խառնուրդ է այս հորինվածքի աղբրեջանական՝ իբր գիտական մեկնաբանությունը. Ամենակալին ներառող մեդալիոնը ներկայացվում է որպես Ահուրամազդային խորհրդանշող թևավոր սկավառակ, Աստվածածինն ու Հովհաննես Մկրտիչը՝ առաքյալներ, ավետարանիչների խորհրդանշանները՝ հրեշտակներ (ընդորում, ոչ թե չորս, այլ միայն երեք), իսկ Վրթանեսն ու Գրիգորիսը՝ «երկու դիվական կերպարներ» (Ахундов, Ахундов 1983, 8–9; Ахундов 1986, 244): Եզրագոտում երկու սեգմենտներ (մեկական յուրաքանչյուր կողմում) ներկայացնում են հեծյալ սրբերի, որոնցից մեկը, թերևս, սուրբ Գևորգը կամ Թեոդորոսը, խաչգավազանով խոցում է գալարվող վիշապին: Կարելի է եզրակացնել, որ տեղի Վրթանեսը իր հոգու փրկության համար, ոչ միայն ինքն է չոքել աղոթքի, այլև Քրիստոսի առջև որպես միջնորդ՝ սուրբ նշանից բացի «հավաքագրել» է սրբերի մի ողջ բանակ:

Իհարկե, արցախյան խաչքարերի մեջ գերակշիռ մեծամասնությունն են կազմում ավել

լի համեստ հարդարանքով խաչքարերը (նկ. 177–181): Ամեն հավատացյալ ջանում էր իր սեփական խաչն ու խաչքարն ունենալ՝ որպես իրական կենսընթացի ապահովության և հոգու ապագա փրկության գրավական: Զանգվածային արտադրությունը ստեղծում էր քիչ աշխատատար, այսու՝ պատվիրատուների ավելի մատչելի՝ հազարավոր օրինակներ: Բայց դրանց միավորում է նախշային և պատկերային հագեցվածությունը և հյուսածո, սկզբունքորեն չընդհատվող, անվերջության պատրանք ստեղծող քանդակը:

Գ. 15-18-րդ դարերի խաչքարերը

(նկ. 182 - 195)

14-րդ դարի կեսերից սկսած՝ երկրի քաղաքական ու տնտեսական վայրէջքի պայմաններում, անկում ապրեց և խաչքարային մշակույթը: Եթե Հայաստանի մի շարք մարզերում (Կոտայք, Գեղարքունիք, Վայոց Ձոր, Սյունիք, Զուղա) այն վեր է ածվում զուտ վերգերեզմանային կոթողի, ապա Արցախում 16-րդ դարից ի վեր, շատ ավելի լայն տարածում են ստանում ուղանկյուն-գուգահեռանիստ ծավալ ունեցող տապանաքարերը, որոնց մի լայն կողին փորագրվում են խաչային հորինվածքներ, իսկ մյուսին՝ հանգուցյալին ներկայացնող պատկերքանադակներ (մանրամասն տես *Տապանաքարեր* գլխում): Նման տապանաքարերն այլևս, որպես կանոն, չեն ուղեկցվում խաչքարերով: Սա հատկապես դիտելի է Արցախում, ուր նման տապանաքարերի լայն տարածման պատճառով, բացօթյա խաչքարերի թիվը բավականին նվազում է:

Եթե Արցախի 12–14-րդ դարերի խաչքարերի գերակշիռ մասը հայտնի է գերզմանոց-

ներից, ապա 15–18-րդ դարերի օրինակների մեծ մասը տալիս են վանքերն ու եկեղեցիները: Այս առումով, կարելի է առանձնացնել Հոռեկավանքը, Դադիվանքը, Եղիշա առաքյալի վանքը, Ավետարանոցի Կուսանաց վանքը, Հերիերի, Տողի, Ծաղկավանքի եկեղեցիները և այլն:

Միայն եզակի օրինակներ են պահպանում նախկին չափերը. դրանք եկեղեցական գործիչների կամ մելիքական տների անդամների կանգնեցրած սակավաթիվ խաչքարերն են, որոնք այժի են ընկնում խորադիր խորանով, բարձր քանդակով, երբեմն՝ ընդարձակ արձանագրություններով (նկ. 182–183, 192–195): Առանձին մանրամասները դառնում են շատ ավելի սխեմատիկ ու կոպիտ, կենտրոնական խաչն ուղեկցվում է բազմաթիվ պարզունակ խաչաքանդակներով, պարզ ուղղանկյուն սեգմենտներով: Շատ ավելի տարածված են փոքր չափերի (կեսից մինչև մեկ մետրի սահմաններում) տափակ ուղղանկյուն սալերը՝ նեղ հյուսածո եզրագոտիով, առանց քիվի, կենտրոնական հյուսածո և ուղեկցող սխեմատիկ խաչերով, արձանագրությունը զուտ հիշատակային բնույթ ունի և միայն հայտնում է, թե ում է նվիրված (նկ. 184): Քանդակը դառնում է սաղր, ելնդավոր գիծը լայնանում է և տափակում, ինչը ողջ հորինվածքին որոշակի հարթատեսություն է հաղորդում: Նման խաչքարերն առանձին չէին կանգնեցվում: Դրանք հարդարում են եկեղեցական շքամուտքերն ու արտաքին պատերի ճակտոնները կամ էլ ուղղակի ագուցվում պատերի մեջ՝ եզակի դեպքերում ստեղծելով շքեղ քանդակային պաննոներ, ինչպես տեսնում ենք օրինակ Ծաղկավանքում, Երից մանկանց վանքում և այլուր (նկ. 185–187), կամ էլ մի փոքր աշխուժացնում են կոպտատաշ քարերով ու կրասվադով իրականացված

ճակատների միապաղատությունը, ինչը կարելի է տեսնել բազմաթիվ գյուղական եկեղեցիներում (նկ. 188, 189): Քիչ չեն դեպքերը, երբ օգտագործվում են եկեղեցական մուտքերի, սյուների և նույնիսկ բարձրադիր կամարների սրբատաշ քարերը՝ դրանց վրա փորագրելով պարզ խաչքարային հորինվածքն ու անկանոն տառերով ու երկուերեք բառից բաղկացած հիշատակային արձանագրությունը (նկ. 190): Նման կատարումները հատկապես լայն տարածում գտան 17–18-րդ դարերում:

Միակերպ այս հոսանքում կարելի է առանձնացնել միայն մի քանի օրինակ, որոնք ցույց են տալիս, թե դեռ կան առանձին վարպետներ, որ հայտնի չափով դեռ պահպանում են նախկին ավանդույթները: Օրինակ, Դադիվանքի 16–17-րդ դարի խաչքարում, որից միայն մի փոքր մասն է պահպանվել: Այստեղ սխեմատիկ ու անհամաչափ կատարումով ներկայացված է Աստվածածինը մանկան հետ քառակերպ գահին տեսարանը և նրանից հոգու փրկություն խնդրող Գրիգորիսը՝ համապատասխան արձանագրական մակագրություններով (նկ. 191): Կամ էլ նշենք Մեծառանից սուրբ Հակոբավանքում Սիմեոն կաթողիկոսի կողմից 1614 թվականին կանգնեցրած խաչքարը, ուր խոշոր ու անահամաչափ քանդակով առանձնացված է ընդարձակ խաչախորանը (նկ. 192): Որ կերտվում էին նաև ավելի նրբաճաշակ օրինակներ՝ կարող են վկայել Ծովատեղի Մելիքիաշայանների տոհմական տապանատանը 1576 և 1586 թվականներին կանգնեցված հիանալի օրինակները (նկ. 193):

Առանձին հիշատակության են արժանի Գանձասարի վանքի երկու խաչքարերը՝ կազնեցված 1507 և 1563 թվականներին՝

պարոն Վելիջանի և Գրիգորիս կաթողիկոսի կողմից (նկ. 194, 195):

Դ. Խաչքարային պատկերաքանդակը

(նկ. 196 – 243, գծ. 31 – 47):

Արցախի խաչքարային մշակույթի էական առանձնահատկություններից մեկն էլ մահկանացուներին պատկերող պատկերաքանդակն է (նկ. 196–202, գծ. 31, 32), որը հատկապես լայն տարածում է գտնում 12-րդ դարից ի վեր: Արցախյան խաչքարային պատկերաքանդակը ներկայացնում է կերպարներ, թեմաներ կամ տեսարաններ, որոնք սովորաբար ընդհանուր եզր չունեն պաշտոնական քրիստոնեության հետ, չնայած տեղադրված են խաչի հարևանությամբ և ուղեկցվում են վերջին օրվանն ուղղված կանոնիկ արձանագրություններով (Петросян 1997): Արձանագրությունները, թեև որոշ դեպքերում օգնում են պարզել, թե ովքեր են պատկերված, սակայն բուն հորինվածքների իմաստի մասին որևէ տեղեկություն չեն պարունակում: Քանդակները ներկայացնում են ռազմիկների, իշխանների և արհեստավորների, կանանց և երեխաների: Կարելի է առանձնացնել կովի և խնջույքի, անմխիթար սգի, «ընտանեկան դիմանկարի» թեմաները: Քանդակները, որպես կանոն, տեղադրվում են խաչային հորինվածքից դուրս և նրանից ներքև: Այստեղ է տեղադրվում և արձանագրությունը, որը զբաղեցնում է քանդակով չզբաղեցված միջակայքերը: Թեմատիկ քանդակներ կրող համարյա բոլոր խաչքարերն էլ վերգերեզմանային կոթողներ են: Քանդակների թեկուզ միայն տեխնիկական նկարագրությունը կարող է զգալի նյութ մատակարարել վերականգնելու տարազի զանազան համալիրները, ժամանա-

Գծ. 31. Խաչքար, 12–13-րդ դարեր, Շուշիի մերձակայք
(Արցախի պեւրական պարունակիրագիրական թանգարան)

Գծ. 32. Խաչքար, 12–13-րդ դարեր, Աղին նահարակ վանք

Գծ. 33. Հեծյալ ռազմիկ, խաչքարային պարկերաքանդակ, 1203 թ., Կոշիկ անապատ

Գծ. 34. Խաչքար, 11–12-րդ դարեր, Պարարա

Գծ. 35. Հեծյալ ռազմիկ, խաչքարային պարկերաքանդակ, 12–13-րդ դարեր, Հանդաբերդի վանք

կի զենքի համարյա բոլոր տեսակները, առանձին արհեստներ:

Նախ անդրադառնանք իրար հետ սերտորեն կապված երկու թեմայի՝ «կովին» և «խնջույքին»: Այն կարելի է սկսել այսպես կոչված «ռազմական ուժի» ցուցադրության տեսարաններից, որոնք ներկայացնում են

ռազմիկին լիովին սպառազինված՝ հեծյալ կամ հետիոտն (նկ. 203–221, գծ. 33–37): Աչքի է ընկնում ձիու խնամվածությունը: Նկատենք, որ Արցախը հետագայում քաջ հայտնի դարձած դարաբաղյան ձիու (նկ. 222) հայրենիքն էր, ուրեմն, պիտի ենթադրել, որ ձիու հանդեպ այստեղ առանձնահատուկ




Գծ. 31




Գծ. 33



Գծ. 32




Գծ. 34



Գծ. 35

Գծ. 36. Հերիորն ուզմիկներ, խաչքարային պատկերաքանդակ, 1208 թ., Շուշիի շրջակայք (Արցախի պեդագոգական պարմաներկրագիտական թանգարան)

Գծ. 37. Հերիորն ուզմիկ, խաչքարային պատկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Պատավաճոր



Գծ. 36



Գծ. 37

վերաբերմունք կար: Ըստ վրաց պատմիչի՝ Թամար թագուհու ամուսին Դավիթ Սոսլանը Գանձակի մահմեդականների դեմ արշավանքի է ելել արցախյան ձի հեծած. «Այնժամ թագավորը զինվեց ու զինավորվեց, նստեց դեղնաբարդ, որը անուն հանած լինելու համար գնել էր Վախթանգ Խաչենացուց, տալով բերդ և գյուղ, որք են Ճարմանը» (Թորոսյան 1992, 407): Դեղնաբարդ վրացերեն բնագրի «զերդագ»-ի թարգմանությունն է: Զերդագն իր հերթին փոխառություն է պահպանել զարթակ կամ պարկերեն zardak բառերից, որ նշանակում է դեղին, դեղնագույն (ոսկեգույն) և զարտակ, զերդակ, զառտ ձևերով կիրառվել է և գրաբարում (Թորոսյան 1992, 533–534, ծան. 242): Նկատենք, որ Արցախի ներկա բարբառում գործածական է զարդա բառը, որպես ընտիր դեղնա-կարմիր ցորեն (հմմտ. «յերի արտի զարդա» արտահայտությունը): Հակված ենք կարծելու, որ զերդագը տվյալ դեպքում (այսինքն՝ վրացերեն տեքստում) ոչ թե սուկ երանգ նշող, այլ արցախյան ձի ցուցող հատուկ տերմին է, ծագած՝ բառի հենց արցախյան տարբերակից, քանի որ արցախյան ձիու հիմներանգը հենց դեղնա-կարմիրն է: «Ոսկեգույն փայլվում է ոչ թե նրա մագաճակայթը, այլ մաշկի գույնը, այդ պատճառով էլ թվում է թե փայլը գալիս է ոչ թե մակերեսից, այլ խորքից. ...դարաբաղյան ձին ոսկի է ցա-

յում, վագում է ոսկու մեջ», — այսպիսի հիացմունքով է նկարագրել արցախյան ձիու հիմներանգը հայտնի արձակագիր Մարիետա Շահինյանը (Шагинян 1931, 345):

Քննարկվող քանդակներում առանձնակի ջանասիրությամբ պատկերվում են նաև զենքերն ու գլխարկը: Ձիու հետ միասին դրանք հանդես են գալիս որպես անձի կարգավիճակն արտահայտող կարևոր հատկանիշներ:

Խաչքարային պատկերաքանդակում ձին ներկայացվում է հանդիսավոր շարժման մեջ, մանրամասն պատկերվում են սանձի երասանակներն ու ձգանները: Ձիու պոչը սովորաբար հանգուցված է, վզից կախված է ձվաձև-երկարավուն կախիկ: Թամքը փոքր է և սովորաբար հեծյալի տակ չի երևում, նրա առկայության մասին կարելի է դատել վզափոկով և պոչի տակով անցնող փոկով, երբեմն թամբից կախված են ասպանդակները: Հեծյալը նստած է հանդիսավոր, ուղղահայաց դիրքով, ողջ մարմինը ներկայացված է կողքից և միայն գլուխը՝ դիմամահայաց: Հանդերձանքից առանձնապես է եռանկյունաձև կամ կոնաձև սաղավարտ-գլխարկը, որը հաճախ ավարտվում է սուր, երբեմն էլ ռոմբաձև ելուստով: Սաղավարտի ստորին եզրից մինչև ուսերն են իջնում երկու ծամ. որոշ օրինակներում հստակորեն դիտելի է, որ դրանք ոչ թե ռեալ հյուսքեր են, այլ սաղավարտի մաս: Որոշ քանդակների վրա դիտվում է միջին լայնության գոտին, որից, սովորաբար երկու փոկերի օգնությամբ, կախված է երկար թուրը: Ռազմիկները հագել են ծնկից ներքև իջնող լայն չուխա: Հեծյալը, սովորաբար, մի ձեռքով բռնում է սանձը, մյուսով՝ սիգակը: Նիզակն ավելի երկար է, քան ձին և ավարտվում է շեղանկյուն սայրով: Ներ-

կայացված են նաև աղեղը, կապարճը, երկարավուն թուրը, երբեմն վահանը և գուրգը: Ի տարբերություն հեծյալների, հետինոտն ռազմիկները զինված են նետ-աղեղով կամ թրով: Երբեմն միասին են պատկերվում երկու հեծյալ և նույնիսկ՝ երեք հետինոտն զինյալ: Արցախի, Ուտիքի, Ջուղայի խաչքարերն աղվանական հայտարարող Ախունդովների հերթական «հայտնագործությունը» վերաբերում է այս ռազմիկներին: Երևույթին ծանոթ լինելով միայն Գանձասարի մի խաչքարի բեկորով և սաղավարտի կախիկներն անվերապահորեն ընդունելով որպես իրական ծամեր, չիմանալով խաչքարի կոնկրետ ժամանակագրությունը (խաչքարը թվագրված է 1174 թվականով) և հաշվի չառնելով էթնոմշակութային միջավայրը, նրանք հոխորտում են, թե տեսեք-տեսեք «աղվանական» խաչքարերը կարող են ունենալ և օտար, ու նույնիսկ մոնղոլ ռազմիկների պատկերներ՝ «բնորոշ խալաթով, գլխարկով, երկու ծամերով և ձեռքներին նիզակ» (Ахундов 1986, 244–245): «Ծամերը» միայն մոնղոլներին բնորոշ համարելու «գյուտն» այնքան է հրապուրել աղբբեջանցի «յուրացնողներին», որ նրանց չի զգոնացրել նաև ռազմիկի երկար նիզակը՝ զինական միատրիբուտ, որը բացարձակապես բնորոշ չէր մոնղոլներին: Հանրահայտ է, որ մոնղոլների հիմնական զենքը նետ-աղեղն էր, որի պատճառով էլ հայերը նրանց նետող (այսինքն՝ նետաձիգ) են անվանել: Գրիգոր Ականեցին, որն ապրում էր Գանձասարից ոչ հեռու գտնվող Ականա բերդում և մանրամասնորեն նկարագրել է մոնղոլների արշավանքը Անդրկովկաս և, ի մասնավորի Արցախ, իր գիրքը վերնագրել է «Պատմություն ազգին նետողաց» (Ականեցի 1961): Սակայն, ամենաէականն այն է, որ «ծամա-


վոր» այս ռազմիկների պատկերներն Արցախի խաչքարերի վրա վկայված են 11-րդ դարից ի վեր (նման քանդակներ կրող մեզ հայտնի խաչքարերը թվագրված են 1158, 1174, 1180, 1181, 1183, 1186, 1189, 1194, 1203, 1205, 1212, 1215 թվերով)՝ ժամանակ, երբ Մերձավոր Արևելքում ոչ միայն չէին տեսել, այլև նույնիսկ չէին լսել մոնղոլների մասին: Ինչ վերաբերվում է երկարագետ ու ծամավոր զինյալներին ընդհանրապես, ապա, ինչպես փորձել ենք ցույց տալ մանրամասն մի քննության մեջ (Պետրոսյան 2001, 75–81), դրանք այնքան էլ բացառիկ չէին հայ զինուժում ու մշակույթում, կազմում էին երիտասարդ ռազմիկների դասը և հայկական աղբյուրներում հայտնի են «մանուկ» անունով: Փաստերը խեղաթյուրելու կամ «անտեսելու» մեծ վարպետ է նաև Ռ. Գեուշը: Արցախի Ճանկաթաղ գյուղի Ծովատեղ հնավայրի խաչքարերը (որոնց մի զգալի մասը ժամանակին ինքն էլ գողացել-տարել է Բաքու) նա ներկայացնում է առանց կոնկրետ աշխարհագրական տեղադրությունը ճշտելու՝ որպես Կովկասյան Աղվանքի Մխնաթի հնավայրի նյութեր, «չհիշելով» հայերեն արձանագրակիր ու թվակիր օրինակները, և հայտարարելով, որ ի տարբերություն հարևան երկրների՝ մարդկային կերպարները Կովկասյան Աղվանքի բնորոշ հատկանիշներից են (Դեյսեբ 1984, 102–103):

Հաջորդ խումբը կազմում են այն հորինվածքները, որտեղ ռազմիկները ներկայացված են մերձավորի և/կամ ծառայի հետ: Այս խմբում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այն տեսարանները, որտեղ հետինոտն կերպարը, նույն չուխայով ու գլխարկով է, ինչ որ ռազմիկը (ինչը ցուցում է, որ գործ ունենք տղամարդու՝ ամենայն հավանականությամբ, ծառայի հետ), բայց, որպես


Գծ. 38. Հեծյալ ռազմիկն ու մարտիվակը, խաչքարային պարկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Պատավաճոր

Գծ. 39. Հեծյալ ռազմիկներն ու մարտիվակը, խաչքարային պարկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Պատավաճոր

Գծ. 40. Խաչքար, 12 – 13-րդ դարեր, Հանդաբերդի վանք



Գծ. 38



Գծ. 39



Գծ. 40

կանոն՝ անգեն, մի ձեռքում ունի մի սափոր, իսկ մյուսով ռազմիկին է մեկնում, հավանա- կան է, գինով լիքը գավաթը (սկ. 223–225, գծ. 38–39): Որոշ տեսարաններում գավաթն արդեն գտնվում է ռազմիկի ձեռքին (սկ. 226–227, գծ. 40, 41): Եզակի դեպքերում կարող են հավելվել և ուտելիքներով ծանրա- բեռնված սեղան-սինիները, ինչը նույնպես ամրապնդում է այն ենթադրությունը, որ գործ ունենք գինու ծիսական ըմպումը ներ- կայացնող տեսարանների հետ:

Սափորն ու գավաթը հանդես են գալիս նաև մի շարք տեսարաններում, ուր բացա-

կայում է սպառագինությունը: Խոսքը վե- րաբերում է բուն խնջույքի տեսարաննե- րին, որտեղ պատկերվում է հանգուցյալը՝ միայնակ կամ մերձավորների շրջապատում, դիմացը դրված ուտելիքներով լի սեղան- սինիներով (սկ. 228–231, գծ. 42, 43): Հան- գուցյալին գավաթ են մատուցում կամ ար- դեն ձեռքին գավաթ ունի բռնած: Խնջույքի տեսարաններում կարող է բացակայել և ռազմական հանդերձանքի ամենակարևոր մասը՝ գլխարկ-սաղավարտը:

Այսպիսով, ստացվում է տեսարանների մի շարք, որ պայմանականորեն մենք սկսե-

- Գծ. 41. Հեծյալ ռազմիկը գինու գավաթով, խաչքարային պատկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Հանդաբերդի վանք
- Գծ. 42. Հեծյալ ռազմիկը և խնջույքը, խաչքարային պատկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Աղին նահապետի վանք
- Գծ. 43. Խնջույք, խաչքարային պատկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Ցրուաշոր (այժմ՝ Մարդարաշենում)
- Գծ. 44. Ընդհանր, խաչքարային պատկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Խնկավան

ցինք ռազմիկից և ռազմական ուժի ցուցադրությունից ու ավարտեցինք խնջույքով:


Քանի որ քննարկվող պատկերաքանդակներն առանց բացառության գտնվում են խաչասալի ստորին մասում և ներկայացնում են հանգուցյալներին, մենք ամուրկովան ունենք հավաստելու, որ խաչքարային հորինվածքում ներքև, իրոք, ցուցում է անցյալը, աշխարհիկը, մահը: Եվ քանի որ խաչքարային հորինվածքի հիմնական իմաստաբանությունը հանգում է խաչի՝ որպես համընդհանուր միջնորդի գործառույթին, կարող ենք պնդել, որ այս քանդակները լոկ էտմահու պատկերներ չեն: Դրանք հանգուցյալի «կյանքի մատյանն» են, ներկայացնում են նրա «գործը»՝ ի դեմս պատկերի և ուղեկցվում անվան գրով՝ ի դեմս արձանագրության:

Խաչքարային պատկերաքանդակում հանդիպում են և, այսպես կոչվող, «ընտանեկան տեսարաններ» (սկ. 232–235, գծ. 44): Որոշ նյութեր ցուցում են, որ նման դեպքերում հանգուցյալի դերում հանդես են գալիս տան կրտսեր անդամները: Այսպես, Օխտը Եղցի վանքի մի խաչքարի վրա (սկ. 236, 237) խաչից ներքև պտղատու ծառի հենքի վրա ծնողների հետ պատկերված է


հանգուցյալ որդին: Խաչից ներքև գտնվող վարդյակն ունի շատ յուրահատուկ տեսք՝ ասեք կծիկ լինի. արդյոք խորհրդանշում է հանգուցյալի ընդհատված (չանցած) երկրային ճանապարհը: Այս խաչքարի արձանագրությունը խիստ ուշագրավ է հորինվածքի հետ համադրումների համար: Բացի կանոնիկ տեքստից. «Թի :ՈԷ: (1158 թ.) էր. ես Սմայատ որդի Վասակա կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Դաթոնիս, որ կիսարեա փոխեցաւ ի Քրիստոյս», որը լիովին հա-



Գծ. 41



Գծ. 42




Գծ. 43



Գծ. 44

Գծ. 45. Մյրնարու մայրն ու որդին, խաչքարային պատկերաքանդակ, 1194թ., Հանդաբերդի վանք



Գծ. 45

մահունչ է պատկերաքանդակի հետ, ուր պատկերված են երեք ֆիգուրներ, լրացուցիչ արձանագրված են նաև ձախակողմյան և աջակողմյան ֆիգուրները (հանգուցյալի հայրը և մայրը)՝ համապատասխանաբար «Սմայատ» և «Իշխանուհի» գրություններով: Այսպիսով, մենք գործ ունենք ընտանեկան մի ուշագրավ դիմանկարի հետ. Սմբատը նստած է գահավորակին, ինչը ցուցում է նրա ազնվական-իշխանական ծագումը, հազել է մինչև ներբաններն իջնող չուխա, գլխին սրածայր գլխարկ է՝ մինչև ուներն իջնող գույգ կախիկներով: Իշխանուհին նստել է գործվածքով ծածկված թախտի


վրա, հագին օձիքը բաց, ուղղաձիգ փոթերով կամ շերտերով հարդարված վերնագգեստ է՝ հագնված մի այլ զգեստի վրա, գլուխը ծածկված է գլխաշորով: Դավթոնը, որը պատկերված է ծնողների միջև և հոտնկայս է, հազել է ծնկներից քիչ ներքև ավարտվող, եզրերը զուգակարով ընդգծվող չուխա, որը մեջքի մասում ամրացված է նեղ զոտիով, ուսից դեպի գոտին է իջնում կաշեփոկ (երևի նախատեսված զենք ամրացնելու համար), գլխին ճիշտ նույն ձևի գլխարկ է, ինչպիսին ունի հայրը, առկա են նաև գույգ «ծամերը»: Հայրն աջ ձեռքը սեղմել է կրծքին, ձախով բռնել որդու ձեռքը (կամ հենել է ծառին, հստակ չի տարբերակվում), մոր մի ձեռքը կրծքին է, մյուսը՝ որդու մեջքին: Կարելի է նաև նկատել, որ Դավթոնի աջ ձեռքում գավաթ կա: Սակայն դատելով հոր աջ ձեռքի դիրքից, Դավթոնը մատուցվածություն չի անում, այսինքն, դա իր՝ Դավթոնի (հանգուցյալի) գավաթն է, ինչը համապատասխանում է այն տրամաբանությանը, թե նման քանդակներում «կենաց բաժակից» ըմպողի դերում հանդես է գալիս հանգուցյալը:

Հանդաբերդի վանքի եզակի մի հորինվածք պատկերում է ստնտու մորը՝ մանկանը կուրծք տալիս (նկ. 238, գծ. 45): Այն ոչ միայն խիստ ուշագրավ է երեխաների խնամքի, կերակրող մոր ու մանկան տարագի առումով, այլև մայրերին պատկերող մի շարք քանդակների հետ նոր հնարավորություններ է ստեղծում նաև Աստվածածնի պաշտամունքի ժողովրդական ակունքերն ու դրսևորումները պարզաբանելու համար:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խաչքարային պատկերաքանդակի մի քանի հորինվածքներ, որ պայմանականորեն կարելի է անվանել «խաչի սպասում» (նկ. 198, 239, գծ. 46):

Գծ. 46. Խոսչին սպասելիս, խաչքարային պարկերաքանդակ, 12 – 13-րդ դարեր, Շուշիի շրջակայք, Արցախի պերական պարմաներկրագիտական թանգարան

Գծ. 47. Մայրը և ոսգմիկ որդին, խաչքարային պարկերաքանդակ, 1212թ., Կոշիկ անապատ



Գծ. 46



Գծ. 47

Շատ ավելի տարածված էր «անմխիթար սգի» թեման (նկ. 240), որը հաճախ ներկայացնում է հանգուցյալին և նրա մորը (գծ. 47): Այսպես, Կոշիկ անապատի մի խաչքարի վրա (նկ. 241)՝ սալի ստորին մասում ձախից պատկերված է նիգակով, աղեղով ու կապարճով զինված հեծյալը, իսկ դիմացը՝ սալի աջ կողմում թախտին նստած է մայրը՝ համապատասխան գրությանը. «Մայրն»: Արձանագրությունը հայտնում է. «Թ. :ՈԿԴ: (1215 թ.). Ես Չափր կանգնեցի զխաչս որդոյ իմոյ Գրիգորոյ. յիշեցէք» (ԳՆՎ 5, 27): Նույնը տեսնում ենք և Հավապտուկ վանքի մի խաչքարի վրա (նկ. 242): Երկու դեպքում էլ մայրերը ձեռքերը պարզել են դեպի որդին՝ կարծեք հիացմունք ու կորստյան վիշտ արտահայտելով:

Առայժմ բավականին սահմանափակ են արհեստավորներին ներկայացնող պատկերաքանդակները: Ադին նահատակի մի խաչքարում, թվում է, ներկայացված է հյուանը կամ տակառագործը (նկ. 243, գծ. 32), Պատարայի 15-րդ դարի մի խաչքարում պատկերված է դարբնոցային տեսարան:

Ինչպես տեսնում ենք, դիտարկվող պատկերաքանդակներն արտահայտում էին գա-

ղափարներ, որոնք կապ չունեն պաշտոնական քրիստոնեության հետ: Ավելին, նույնիսկ թվում է, թե դրանց մեծագույն մասը չպիտի տեղ գտնեն հոգու փրկության քրիստոնեական գաղափարն արտահայտող խաչքարի վրա: Սակայն, ժամանակակիցների համար դա այնքան էլ հակասություն չէր: Հավատն Արդար դատաստանի հանդեպ չէր բացառում և հավատը խնջույքի կամ կովի միջոցով մահը հաղթահարելու նկատմամբ: Հանգամանք, որն էլ պայմանավորել է գուտ ժողովրդական թեմաների պատկերումը խաչքարերի վրա:

Ե. Խաչքարային արձանագրությունը


(նկ. 244 – 260, գծ. 48 – 55)

Խաչքարային մշակույթի ամենաեական բնութագրերից մեկն էլ արձանագրությունն է: Եթե չհաշվենք եզակի բացառությունները, երբ հայերեն արձանագրությունը գուգորդվում է այլալեզու արձանագրությամբ, խաչքարային արձանագրությունները բացառապես հայերեն են՝ անկախ նրանց գտնվելու և ստեղծվելու քաղաքական, աշխարհագրական կամ դավանական միջավայրից:


- Գծ. 48. Արձանագրություն, 866 թ., Վաղուհաս
- Գծ. 49. Արձանագրություն, 1271 թ., Հանդաբերդի վանք
- Գծ. 50. Արձանագրություն, 1196 թ., Հարզումեր
- Գծ. 51. Արձանագրություն, 1194 թ., Հանդաբերդի վանք

Եթե, ինչպես նշել ենք, Արցախի խաչքարային հորինվածքներն հայկական ընդհանուր օրինաչափությունների հետ, ունեն սան տեղական որոշ առանաձնահատկություններ, ապա խաչքարային արձանագրություններն, իրենց կառուցվածքային բովանդակային բնութագրով, ամբողջովին նույնական են խաչքարային արձանագրությանն ընդհանրապես:

Կարող ենք հավաստել, որ Արցախի խաչքարային արձանագրությունները, որոնց թիվը հարյուրների է հասնում, այդ մշակույթի հայկականության ամենավաղ վկայություններն են: Խիստ ուշագրավ է և այդ արձանագրությունների անձնանունների ցանկը՝ ժամանակի քաղաքական հանգամանքներից բխող օտարահունչ անունների կողքին՝ բավականին մեծ թիվ են կազմում այն





Գծ. 48



Գծ. 49



Գծ. 50




Գծ. 51

- Գծ. 52. Արձանագրություն խաչքարի թիկունքին, 881թ., Մեծ Մասրիկ
- Գծ. 53. Հասան Վախթանգյանի ծածկագիր արձանագրությունը խաչքարի կողին, 1182թ., Դաղիվանք


անձնանունները, որոնք հասկանալի են միայն հայերեն՝ Ավետիս, Արևհատ, Աստար, Գոհար, Դարբին, Դեղ, Եղբայր, Թագուհի, Իշխան, Խոցադեղ, Հովադեղ, Հագար, Հայրապետ, Հայրանուն, Ճորտ, Մխիթար, Մարգարե, Մեծպապ, Շուշիկ, Վարդապետ, Տիրամայր, Փոքրիկ և այլն, դասական հայկական անուններ՝ Աշոտ, Գագիկ, Սմպատ, Սևադա, Վախթանգ, Վաիրամ, Վասակ, Վարդան և այլն, անձնանուններ, որոնք ունեն փոքրացուցիչ հայկական ածանցներ՝ Գրգորիկ, Իշխանիկ, Հասանիկ, Վասակիկ, Վարդիկ կամ էլ հայկականացված քրիստոնեական անունները՝ Բարսեղ, Գրիգոր, Գրիգորիս, Թումա, Հակոբ, Հովհաննես, Հովսեփ, Սարգիս, Ստեփանոս և այլն:

Ուշագրավ է, որ բացառապես հայերեն արձանագրություններ են կրում նաև Բուն Աղվանքում՝ Կուրից հյուսիս գտնվող խաչքարերը (Կարապետյան 1997):

Խաչքարի հետ բաց հաղորդակցումը ենթադրում էր մատչելի դարձնել նաև արձանագրական տեղեկատվությունը, որով էլ պայմանավորված է դրանց տեղադրումը սալի արևմտյան երեսին (քիվին, ճակտոնին, եզրագոտու վրա, հորինվածքի ստորին մասում, պատվանդանի վրա, նկ. 96, 182, 244–250, գծ. 48–51)՝ այսինքն տեսանելի լինեն առաջին իսկ հայացքից: Զգացվում է ձգտումը՝ արձանագրությունը չխառնել հորինվածքի քանդակագարդերի հետ, ապահովել նրա դյուրընթեռնելիությունը: Որոշ դեպքերում, երբ հատկապես ասելիքը շատ ավելի ընդարձակ է, արձանագրությունը զբաղեցնում է նաև խաչքարասալի կողերն ու թիկունքը (նկ. 100, 251–253, գծ. 52), խառնվում զարդերին (նկ. 254, 255) և այլն: Որոշ խաչքարեր էլ արտաքինապես



Գծ. 52



Գծ. 53

ավելի նման են վիմագիր հիշատակարանի, քան՝ քանդակագարդ կոթողի (նկ. 256, գծ. 54):

Խաչքարային արձանագրությունը, որպես կանոն, հայտնում է այն կանգնեցնելու ժամանակը, դրա համար օգտագործելով Հայոց մեծ թվականը (երբեմն էլ «Ի թուականիս հայոց» պարբերությամբ), խաչքար կանգնեցնելու առիթը, նախապատմությունը կամ հանգամանքը, նրա անունը՝ ում նվիրված է խաչքարը, այն կանգնեցնողների անունները, և հավատացյալներին ուղղված պատգամ-պատվիրանը՝ որ երկրպագեք խաչին, Աստծուն ուղղված ձեր աղոթքներում հիշեցեք և մեզ: Այսինքն, արձանագրությունն ուղղված է ողջերին, այն ապահովում է խաչքարի սրբազան գործառույթը՝ ներգրավելով բոլոր ընթերցողներին: Սա նաև ընդհանուր գրագիտության

ու հայերենագրության լայն տարածման հավաստի ապացույց է:

Այսուհանդերձ, հայտնի են նաև խաչքարային մի քանի ծածկագիր արձանագրություններ, որոնց ծածկագրումը կապված էր միստիկ բովանդակության հետ (աշխարհիկ կյանքից հրաժարում, մեսսիայի գալստյան կանխագուշակում և այլն), ինչն այնքան էլ չէր պատշաճում հույսի և փրկության երաշխիք համարվող խաչքարին և ուղղված էր «հատուկ պատրաստություն» ունեցող ընթերցողին:

Արցախյան խաչքարային արձանագրությանն ի մոտո ծանոթանալու համար ներկայացնենք դրա դրսևորման երկու դասական օրինակ:

Առաջինը Դադիվանքի հայտնի խաչքարն է՝ կանգնեցված Արցախի ավագ իշխան Հասանի կողմից 1182 թվականին (նկ. 257): Խաչքարն ունի ավելի քան 2 մետր բարձրություն, խաչքարի համար խիստ անսովոր հաստություն (0.5 մետր), ինչը, թերևս, արվել է կանխամտածված՝ ապահովելու կոթողի ամրությունը: Հորինվածքը ներկայանում է Հյուսիսային Արցախում 12–13-րդ դարերում համարյա դասական դարձած տարբերակով: Եռաթել ժապավեններով հյուսված քիվն ու եզրագոտին կազմում են ուղղանկյուն խորան, որի մեջ ներառված է եռաբողբոջ երկատումներով ավարտվող թևերով խաչը: Վերջինս հենվում է Արցախի համար խիստ տիպական՝ երիցուկատիպ ծաղիկներով ավարտվող ուղղաձիգ արմավագարդի, ապա և հորիզոնական արմավագարդի վրա, որն էլ իր հերթին «ծագում է» եռալար երիզի հյուսվածքով ձևավորված մեծադիր վարդյակից: Խորանի վերին անկյունների խաղողի որթից դեպի խաչահատումն են իջնում նորից եռա-

մաս ողկույզները: Խաչքարի աջ կողին փորագրված ընդարձակ արձանագրությունը հայտնում է. «Ես Հասան որդի Վախտանգա, տէր Հաթերքո և Հանդաբերդոյ, Խաչինաբերդո և Հաւախաղացին կացի յաւագութեան ամս :Խ: Շատ պատերազմաւ և յաղթեցի թշնամեաց իմոց աւգնականութեամբն Աստուծոյ: Եւ եղեն ինձ :Զ: որդի, զբերդերս և զգաւառս ետու նոցայ և եկի ի վանքս մատ յիմ եղբայրս Գրիգորէս և եղէ կրանաւոր: Եւ բերի զխաչքարս յԱզուա, շատ աշխատութեամբ և բազում հնարիք և կանգնեցի սուրբ նշան հոգոյ իմո յիշատակ: Արդ, վասն ձեր հոգոյդ, որք ընթեռնոյք՝ զիս յաղաթս յիշեցէք: ՈԼԱ (1182) թուիս» (ԴՀՎ 5, 198): Ձախ կողի ստորին մասում փորագրված արձանագրությանը, որն ունի տարօրինակ տառաձևեր և երկար ժամանակ համարվում էր այլալեզու կամ անընթեռնելի, կանդրադառնանք քիչ հետո: Ինչպես տեսնում ենք, այս արձանագրությունը ներկայացնում է. ա) այն, ինչ տեղի է ունեցել մինչև խաչքարի կանգնեցումը, այսինքն՝ առիթը կամ նախապատմությունը, բ) խաչքարի կանգնեցման հետ կապված կոնկրետ հանգամանքները և կանգնեցման բուն փաստի վավերացումը, գ) կանգնեցման նպատակը, դ) խնդրանք-պատգամը:

Արձանագրության սխեմայում դիտելի է ժամանակային հստակ շարժում՝ անցյալ, ներկա, ապագա: Ընդորում, խաչքարը կանգնեցնելու առիթը կապվում է իրականաշխարհիկ կյանքի կոնկրետ իրադրության կամ նրա փոփոխության հետ, կանգնեցման փաստի պարտադիր արձանագրումը կարելի ընկալել որպես միջնորդավորման հաստատմանն ուղղված մի ծես, իսկ նպատակն արդեն վեր է ցանկացած աշխարհիկից, այն միայն և միայն սրբազան է: Այն

հավաստում է, որ խաչքարի կանգնեցման հիմնական ու վերջնական նպատակը հոգու փրկությունն է՝ մահը հաղթահարելու կամ անմահություն ստանալու քրիստոնեական ընկալումը: «Սուրբ նշանը» պիտի պահի հիշատակը և վերջին օրերին՝ Ահեղ դատաստանի ժամանակ միջնորդի Ամենակալի առջև՝ նրա (նրանց) հոգու փրկության համար, ում այն նվիրված է:

Արձանագրության այն հատվածում, ուր խոսվում է խաչքարի կանգնեցման մասին՝ օգտագործվում է «սուրբ նշան» եզրը, իսկ մինչ այդ, երբ պատմվում է, թե ինչ դժվարությամբ է բերվել խաչակիր կոթողը՝ «խաչաքար» եզրը: Սա խաչքարի միջնադարյան առաջին և, առայժմ միակ գրավոր հիշատակությունն է: Ընդհանրապես խաչքարային կանոնիկ արձանագրությունը համարյա չի կարևորում նյութը, որից պատրաստված է խաչը, այն կոչվում է «սուրբ նշան» կամ «սուրբ խաչ» (բազմաթիվ հավելյալ ածականներով, ինչպես օրինակ՝ «նշան սուրբ խաչի», «ուրախ նշան», «կենսունակ նշան», «աստուածընկալ սուրբ նշան», «նշան սուրբ երրորդութեան», «տեղունական սուրբ նշան», «գամենարհնեալ և գփրկական կենսաբեր հրաշագործող սուրբ նշան Քրիստոսի» և այլն և այլն), հազվադեպ՝ «ամենափրկիչ» կամ որևէ քրիստոնեական սրբի անունով: Եվ միայն այս արձանագրության մեջ, այն էլ նրա այն հատվածում, երբ խոսվում է գուտ տեխնիկական բնույթի խնդիրների մասին, օգտագործված է «խաչաքար»՝ խաչի և քարի միասնությունը փաստող ժողովրդական եզրը:

Ինչ վերաբերում է տարօրինակ տառաձևերով արձանագրությանը (նկ. 258, գծ. 53), որ համարվել է վրացատառ, արաբատառ կամ




Գծ. 54

ույնիսկ աղվաներեն (մանրամասն տե՛ս Պետրոսյան 2008, 317–319), ապա այն հայերեն ծածկագիր է, գրված Հասանի ձեռքով և հայտնում է. «Ձեռնայգիր է իմ՝ Հասանայ. եղբայրք, զգաստ կացայք: Ես յաշխարհայս չետարա ոչինչ. հաւատացայք, դռ[ւ]ք այլ չտանիք» (Պետրոսյան 1998):

Այսպիսով, արձանագրությունը պատկանում է խաչքարը կանգնեցնող Հասան Վախթանգյանին և գրվել է նրա իսկ (այսինքն՝ ոչ վարպետ գրչի) ձեռքով:

Ինչն էր ստիպել Խաչենի գորեղ իշխանին դիմել ծածկագրության և ինչու՞ ծածկագիրը տեղ է գտել բոլորի համար «մատչելի» խաչքարի վրա: Ինչպես վկայում է խաչքարի հիմնական՝ կանոնիկ արձանագրությունը՝ բավականին հախտոն կյանքով է ապրել Հասան Վախթանգյանը. նա քառասուն տարի եղել է ողջ Խաչենի իշխանը, ունեցել



Գծ. 55. Սահլունի արձանագրությունը, 1257 թ., Առաջաձոր

է վեց որդի, մղել է բազմաթիվ հաղթական պատերազմներ, բայց, ի վերջո, բերդերն ու գավառները հանձնել է իր որդիներին, հրաժարվել է աշխարհիկ կյանքից և դարձել կրոնավոր:

Եթե նկատի ունենանք, որ ծածկագրում Հասանն իր կրոնակից եղբայրներին զգուշացնում է աշխարհիկ կյանքի ունայնության մասին, ապա կարելի է հավաստել, որ ծածկագիրն աշխարհիկ կյանքից հրաժարվելու նրա *փիլիսոփայությունն* է ներկայացնում (այն դեպքում, երբ հիմնական արձանագրությունը ներկայացնում է այդ կյանքից հրաժարվելու *պատրմությունը*) և այս առումով, փաստորեն, հիմնական արձանագրության շարունակությունն է, սակայն, գրված պակաս մատչելի լեզվով:

Երկրորդ օրինակը ծագում է Առաջաձորից

և ներկայացնում է մի ռազմիկի «արկածային» պատմությունը: Խաչքարն ունի մեծ չափեր (բարձրությունը՝ 2,10 մետր, լայնությունը՝ 0,84 մետր, նկ. 259), մանրամասն մշակված քիվ, երկու կենտրոնական խաչ, որոնք խորհրդանշում են խաչքարը կանգնեցրած Սահլունին և նրա կնոջը, նոնաքանդակներ և այլն: Արձանագրությունը տեղադրված է քանդակային հորինվածքից ներքև, զբաղեցնում է սալի մակերեսի մեկ երրորդը (նկ. 260, գծ. 55): Այն հայտնում է. «Թվ : 29: (1257 թ.). իշխանութեամբն Ջալաին, պատրոնութեամբն Հասանայ, ես՝ Սահլուն գնացել եմ ի Մուլոդն ու գնացել եմ ի Սոնեթ ու գնացել եմ ի Կասարիայ ու :Բ: հետի ի առագմ եմ մտել ու խաղաղութեամբ ի դուս եկել: Կանգնեցի խաչս ինձ և ամուսնոյ իմն. յաղաթս յիշէք...»: Ինչպես ցույց ենք տվել այս արձանագրության մանրամասն քննությամբ (Петросян 1991), Սահլունը Խաչենի իշխանության զորացուկատներից մեկի կազմում մասնակցել է մոնղոլական արշավանքներին դեպի Մուլոդ (Մուլոդը Հյուսիսային Իրանի անմատչելի լեռներում տեղադրված իսմայիլիտ աղանդավորների երկիրն էր՝ Ալամութ կենտրոնով), Կեսարիայ և Սվանեթ, մասնակցել է երկու ճակատամարտի և ողջ մնացել: Հավանական է, որ ռազմի դաշտում մեր հերոսը խոստացել է՝ ողջ մնալու դեպքում խաչքար կանգնեցնել, ինչն էլ իրականացրել է հեռավոր արշավանքներից բարեհաջող վերադառնալուց հետո:



Գլուխ հինգերորդ

Տապանաքարային մշակույթը

(Նկ. 261 - 300, գծ. 56 - 60)

Հայ միջնադարի դասական գերեզմանային կառույցը ճարտարապետական լուծման առումով երկնաս էր՝ բաղկացած հորիզոնական դիրքով դրվող հարթ կամ երկթեք տապանաքարից և ուղղաձիգ կանգնեցվող խաչքարից: Եթե առաջինը խորհրդանշական ձևով իրականացնում էր խզումը, ապա երկրորդը, ընդհակառակը՝ կապը:

15-րդ դարից սկսած Հայաստանում երևան են գալիս տապանաքարերի նոր տիպեր, ինչպիսիք էին ուղղանկյուն-գուգահեռանիստ ծավալ ունեցող (հաճախ կիսակլոր վերնամասով, որի պատճառով դրանք կոչվում են նաև օրորոցաձև) տապանաքարը, խոյաքարերը և համեմատաբար սահմանափակ տարածում գտած ձիաքարերը: Ուղղանկյուն գուգահեռանիստ տապանաքարը (հյուսիսային և հարավային լայն, և արևելյան ու արևմտյան նեղ նիստերով) ծավալային առումով եկեղեցական բազիլիկ կառույցը խորհրդանշող և դեռ վաղ միջնադարից քաջ հայտնի այսպես կոչվող երկթեք տապանաքարի մի տարբերակն էր, և շնորհիվ իր ծավալային լուծման ու հորինվածքների, միավորում էր վերոհիշյալ երկու գործառույթները՝ զանգվածեղությանը խաղաղով տապանաքարի, իսկ ուղղաձիգությանը՝ վերգերեզմանային կոթողի դեր (Նկ. 261, 262): Խաչային հորինվածքներն զբաղեցնում են դրա մի լայն նիստը (սովորաբար՝ հյուսիսային), իսկ ֆիգուրա-

